

Երեսնամյա այսպիսին

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լեւոն-Կարապետ Պալճյանի կյանքն ու հասարակական գործունեությունը Ռումինիայի հայկական գաղթօջախում Նվիրվում է Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 110-ամյակին



Սկզբը՝ թիվ 1

Որոշ ժամանակ անց՝ 1918-ին, պատերազմում պարտված Ռումինական Թագավորության կնքած Բուխարեստի հաշտության պայմանագիրը դառնում է հայ գաղթականների հետ վերադառնալու առաջին խթանը:

Վերադառնալով եւ վերջնականապես վերահաստատվելով Բուխարեստում՝ Պալճյանների ընտանիքի առաջին հոգսը 11-ամյա տղայի կանոնավոր կրթության հարցը լուծելն էր: Բուխարեստի միակ ազգային վարժարանում՝ «Միսաքյան» երկսեռ կրթօջախում, դեռեւս 1916-ից դադարեցված էին դասերը: Լինելով հայկական գաղթօջախի հոգսերով ապրող ընտանիք՝ Պալճյանները եւս կարելի էր երթալիս վերաբացման հարցը, տեղի երեխաների հայեցի կրթությունն ստանալու հանգամանքը, նույնիսկ մասնակցում են դպրոցի վերաբացման համար տարվող շինարարական աշխատանքներին, սակայն ժամանակը չէր սպասում, իսկ 11-ամյա պատանու կանոնավոր կրթությունը դեռ իրականություն չէր դարձել:

Ահա այս հանգամանքներում, չնայած նյութական սուղ միջոցներին, 1920-ին ծնողները տղայի կրթության հարցով դիմում են «Էվանգելիշե Շուլե» (Evangelische schule) գերմանական ավետարանչական միջնակարգ վարժարան, որտեղ Լեւոն-Կարապետին միանգամից ընդունում են չորրորդ դասարան:

1924-ին կիսատ թողնելով այստեղ ուսումը՝ Լեւոն-Կարապետ Պալճյանն ընդունվում է ռումինական դպրոց, իսկ այնուհետեւ՝ Բուխարեստի Առեւտրական բարձրագույն վարժարան: Տարիներ անց, Ռումինիայի եւ Բուլղարիայի թեմի առաջ-

նորդ Տիրայր արք. Մարտիկյանի հուշերում հատուկ արժեւորում է ստանում Առեւտրական վարժարանից մնացած Վեհափառի «ձեռքի շնորհքը»։ «Վեհափառը մի լավ հատկություն ուներ, շատ գեղեցիկ ծրարներ էր պատրաստում: Բուխարեստում առեւտրի դպրոց էր ավարտել եւ երբ մեզ ծրարներ էր բաժանում, դրանք անպայման իր ձեռքով զարդարված էին լինում» (Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց. Նվիրվում է մահվան 10-րդ տարեկիցին, Մայր Աթոռ Սբ Էջմիածին, 2005, էջ 117):

Անշուշտ, գաղթական հայ ընտանիքի համար, որտեղ կրթության նկատմամբ սերը պաշտամունքի էր հասնում, ծանր էր համակերպվել մտքի հետ, թե ֆինանսական սուղ միջոցները կարող են երեխայի կրթության ընդհատման պատճառ դառնալ, սակայն գոյատևման օրենքները հոգեւոր ցանկությունների հետ հաճախ չէ, որ համընկնում են:

Խոսելով գերմանական վարժարանում ուսումը թերի թողնելու պատճառների մասին՝ Վեհափառը հետագայում հիշում է. «Չնայած այն բանի, որ ծնողներս կանգ չէին առնում ֆինանսական ոչ մի զոհողության առջեւ ինձ ըստ հնարավորության բարձր ուսում տալու համար, եւ չնայած, որ դպրոցական ամառային արձակուրդների ժամանակ ես աշխատում էի ծանոթ հայազգի առեւտրականների մոտ, դրամ վաստակելու համար, բայց, դրանով հանդերձ, իմ ուսման համար պահանջվող վարձը մեր ընտանիքի համեստ ֆինանսական հնարավորություններից բարձր էր» (Շտիկյան Ս., Վազգեն Առաջին Կաթողիկոս Ամենայն Հայոց. համառոտ տարեգրություն (1908-1955), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1986 թ., էջ 20):

1929-ին Լեւոն-Կարապետն ավարտում է բարձրագույն վարժարանի առեւտրական ճյուղը՝ հաջողությամբ հանձնելով ավարտական քննությունները եւ նույն թվականին էլ անցնում աշխատանքի՝ Պուլբեշի (Բուխարեստ) վերականգնողական եւ անվանափոխված «Միսաքյան-Զեսիմյան» ազգային վարժարանում՝ որպես ուսուցչի օգնա-


կան, այնուհետեւ նաեւ՝ կազմակերպիչ:

Սակայն մոր երազանքը դեռեւս իր լրումին չէր հասել: Ի թիվս ռումիններեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզուների կատարյալ իմացության՝ նա ցանկանում էր տեսնել որդու մայրենին բարելավված ու կատարելագործված: Այդ նպատակով էլ որդուն հորդորում է դիմել հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ Գեորգ Ղազարյանին, որի օգնությամբ երիտասարդը մեծ հետաքրքրությամբ ծանոթանում ու բացահայտում է մայր լեզվի գանձերը: Լեւոն-Կարապետի շուրթերին հաճախ էին հայտնվում հայ բանաստեղծներ Վարուժանի, Զարեհի, Տերյանի, Թումանյանի եւ այլոց չափածո ստեղծագործությունները: Ասումների նրա տաղանդը հիացնում է գաղութաբնակներին: Այդ ձիրքը համակիրների բանակ է թողնում իր հետեւից նաեւ 1929-ից Բուխարեստի ազգային վարժարանում օգնական ուսուցիչ եւ քարտուղար աշխատելու տարիներին՝ թե՛ ուսուցչական անձնակազմի, թե՛ աշակերտների մտքերը դեպի հայրենի եզերքի հետ կապելու հարցում արտասանողի՝ տողերին տված հայրենասիրական մեծ հրալույս ոգեղեն ուժգնությամբ:

Նույն շրջանում Կ. Պալճյանն ակտիվորեն անդամակցում էր Հայ մարմնակրթական միությանը, անցնում սկաուտական շարքեր, նաեւ առողջ ապրելակերպի մասին դասախոսություններ կարդում:

Հետագայում, խոսելով երիտասարդության մասին, նա կարծես բնութագրում է երիտասարդի ի՛ր տեսակը. «Եթե ժողովուրդներ կան, որոնց մեջ ցեղին առավելագույն դրական կողմերը ի հայտ կուգան՝ հասուն մարդոց կամ ծերերու սերունդին մեջ, կարծեք հայոց մեջ այդ առավելագույն դրական գիծերը առատորեն կգտնենք հայ երիտասարդին մոտ» (Պալճյան Կ., Մուսա լեւոն հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ, Պուլբեշ, 1940 թ., էջ 44):

1932-ին Կ. Պալճյանն ընդունվում է Բուխարեստի համալսարանի



գրականության եւ փիլիսոփայության ֆակուլտետ՝ խորամուխ լինելով մանկավարժության, հոգեբանության, փիլիսոփայության մեջ: Այս նույն շրջանում, ընդգրկվելով «Հայ ուսանողական միության» շարքերը, ծավալում է մշակութային ու վարչական լայն գործունեություն, որոնց մասին վկայություններ կան այդ շրջանում լույս ընծայվող «Արագ» պարբերականի համարներում:

Լեւոն-Կարապետ Պալճյանը նաեւ տեղի «Հայ ուսանողական միության» ակտիվ անդամներից եւ կազմակերպիչներից էր: «Համալսարանի ուսանողական առաջին տարիներից նա մի խումբ գիտակից եւ նվիրված հայ երիտասարդների հետ Բուխարեստում աշխատում է «Հայ ուսանողական միության» մեջ, պետական եւ այլ դպրոցներում սովորող հայ նոր սերունդի մեջ ազգային ոգի արթնացնելու եւ նրանց հայ պահելու ազնիվ գաղափարով», - բնութագրում է կենսագիրը (Վազգեն Ա., Հայրապետ Հայոց, Կենսագրություններ, կոնդակներ, քարոզչություններ, Էջմիածին, 1958, էջ 12):

1936-ին Բուխարեստի Սբ Հրեշտակապետը եկեղեցու գավթում «Հայ ուսանողական միության» կազմակերպած հերթական նիստում կարդալով «Ֆրանց Վերֆելը եւ իր «Մուսա Լեւոն քառասուն օրերը» վեպի մասին զեկուցումը՝ հատուկ ուշադրության է արժանանում հատկապես հեղինակավոր հայագետ, լրագրող Յ. Սիրունու կողմից:

Համալսարանական դասերից գատ՝ Կ. Պալճյանն սկսում է հաճախել Յ. Սիրունու գրաբարի դասերին՝ նորովի բացահայտելով հայոց լեզվի ոսկեղենի գեղեցկությունը:

Շարունակությունը՝ էջ 2



Լեւոն-Կարապետ Պալճյանի կյանքն ու հասարակական գործունեությունը Ռումինիայի հայկական գաղթօջախում

Սկիզբը՝ էջ 1

Չուզընթաց՝ համալսարանական ուսուցչի կյանքում անհագ ընթերցանության շրջան է սկսվում, եւ նա իր առջեւ նպատակ է դնում ձեւավորելու համակողմանի աշխարհայացք, ընդլայնելու մտափորձը ոչ միայն հայազգի դասականների ստեղծագործությունների ընթերցանությամբ, այլեւ Ֆ. Բեկոնի, Ռ. Դեկարտի, Յ. Սպենսերի, Ջ. Դյուրի աշխատություններին ծանոթանալով։ Արդյունքն ավարտական հաջող քննություններն էին, որի մասին 1936-ի իր համարներից մեկում անդրադարձել է «Արագ» օրաթերթը՝ հպարտությամբ արձանագրելով. «Բուխարեստի համալսարանի գրական-փիլիսոփայական ֆակուլտետը հաջողությամբ ավարտելով՝ «Լիչենցիայի» տիտղոս ստացավ Ազգային վարժարանի ուսուցիչներեն պ. Կարապետ Պալճյան» (Արագ, թ. 392,

մարտի 26, Պուբլեշ, 1936) հոդվածը՝ «Նոր Համալսարանավարտ»):


Ազգային վարժարանի խորագիտակ ուսուցչի համար մանկավարժության ասպարեզը ինքնադրսեւորման ցանկալի միջոց էր, որտեղ կարողանում էր ի սպաս դնել իր գիտելիքները՝ հայրենասեր ու հայրենաքաղձ անձնավորությունների կերտման, սեփական լեզվի հանդեպ պատկառանքի ու սիրո մղումով դաստիարակվող մատաղ սերունդներ կրթելու բարդ ու դժվարին նպատակին ծառայեցնելով։

Այդ շրջանում Հայկական ազգային վարժարանում պակասում էին հատկապես բարձրագույն կրթությամբ հայալեզու ուսուցիչներ։ Նորավարտ ուսանողը կրկին դիմում է Բուխարեստի պետական համալսարան, այս անգամ արդեն Տիտու Մայորեսկու անվան մանկավարժական համալսարանական սեմինարներին, որտեղ, սո-

վորելով մեկ տարի, ստանում է մանկավարժի դիպլոմ։ Բարձր նիշերով ավարտելով մանկավարժության դասընթացը եւ ստանալով մանկավարժի որակավորում՝ խորագիտակ երիտասարդն ընդլայնում է մանկավարժական գիտելիքների իր գիտանոցը՝ այս անգամ ոչ միայն սահմանափակվելով դպրոցում դասավանդելով, այլեւ հանրային դասախոսության ձեւ ընտրելով հրապարակախոսությունը՝ ուղեւշում է ճշմարիտ ճանապարհ թե՛ երիտասարդներին, թե՛ նրանց ծնողներին՝ իր կողմից խմբագրվող «Յերկ» ամսագրի, երբեմն նաեւ այլ պարբերականների էջերից։ 1943-ից Լեւոն-Կարապետ Պալճյանի կյանքում սկսվում է նոր շրջան. նրա առջեւ բացվում են հոգեւոր վերելքի եզերքներ։

Շարունակելի

Լուսինե ՅԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մանկավարժական գիտ. թեկնածու



ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆՔԻ ՄԵՋ ԱՌԿԱՆ ՄԻ ԿՅԱՆՔ

Նվիրվում է Վահան Թեբեյանի ծննդյան 140-ամյակին



Մեծ գրողների կյանքի առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանք իրենց գործով ու մտածումներով բացահայտում են նաեւ իրենց ապրած ժամանակաշրջանը, հաճախ անգամ բնութագրում քաղաքական ու պատմական տեղաշարժերը, որոնց վկան կամ էլ մասնակիցն են եղել։

Վահան Թեբեյանը մեկն է այդ մեծերից։ Նրա կյանքի բարդ ընթացքը հարուստ է հայ ազգային կյանքի, կուսակցական, հասարակական ու գրական ընդգրկումների առլեցուն ենթաշերտերով, որոնք տեղիք են տալիս ոչ միայն տարաբնույթ մտորումների, այլեւ օգնում են խորքից հասկանալու գրողի ստեղծագործական որոնումներն ու նվաճումները։ Թեբեյանն այն մարդը չէր, ում կենսագրությունն ամփոփվում է երեք բառով՝ ծնվեց, ապրեց, մահացավ։ Նրա կյանքը լեցուն է բազմաբնույթ դեպքերով, եւ գրեթե ապրած ամեն մի օրը բեկվել է արյունոտ 20-րդ դարի մեր պատմության աղետալի իրադարձություններից, խռովել նրա հոգին՝ մղելով տխրության ու թախծի, ըմբոստության ու նզովքի, անհուսության ու հույսի խոսք ուղղելու իր ժամանակակիցներին ու հայ գալիք բոլոր սերունդներին։

Վահան Թեբեյանի կյանքը, ցավոք, մինչեւ այժմ էլ լիովին ուսումնասիրության չի ենթարկվել մեզանում, ըստ ամենայնի ամբողջական համապատկերի բերված չէ նաեւ նրա ստեղծագործական աշխարհը։

Փաստաթղթի եւ Միքայել Կյուրճյանի, Արշակ Ալպոյաճյանի, Ավետիս Սանճյանի, Վաչե Ղազարյանի, Երվանդ Ազատյանի, Վազգեն Գաբրիելյանի, Գեղամ Եագույայանի, Թամարա Հովհաննիսյանի՝ Թեբեյանի կյանքին ու գործին վերաբերող ուսումնասիրությունները, որոնք նաեւ սկզբնաղբյուրի դեր ունեն, եւ որոնցում շեշտը դրված է բանաստեղծի գրական ու հասարակական գործունեության տարաբնույթ իրողու-

թյունների եւ ստեղծագործական մի շարք վավերական փաստերի ու արժեքների վրա։ Այդուհանդերձ, մինչեւ այժմ էլ ի մի հավաքված ու ամբողջական շարադրված չէ Թեբեյանի կենսագրությունը, մանավանդ մի կողմ են թողնվել ապրող ու տառապող մարդու եւ ստեղծագործող անհատի հոգեկան ու հուզական տվյալանքները, մարդկային ցավերի այն ուղիները, որոնցով ստիպված քայլել է մեծ բանաստեղծը, որոնց մեջ հաճախ այրվել ու փոթորկվել է Թեբեյանի վիրավոր սիրտը։ Պատահել է նաեւ, որ Թեբեյանի մասին գրելիս, ինչպես սփյուռքահայ գրականագետ Վաչե Ղազարյանն է նրա մի հոդվածից (*տե՛ս «Շիրակ», 1909, թիվ 12-13, էջ 296*) մեջբերում՝ Ստամբուլում 2017 թ. տպագրված Վ. Թեբեյանի հրապարակագրության մի մասն ընդգրկող «Երկու դրախտներ» գրքի առաջաբանից, «... ժողովուրդին անօթութիւնը խաբել փորձուի թեթեւ ու անարժեք հրապարակութիւններով»։

Թեբեյանի մասին սպառնիչ խոսք ասելուն խանգարել է նաեւ այն հանգամանքը, որ գրողն ստիպված է եղել ապրել աշխարհի չորս ծագերում, բնակավայրից բնակավայր տեղափոխվել, որի պատճառով էլ նրա շատ գրություններ ցայսօր էլ շարունակում են մնալ անհայտության մեջ, տարբեր երկրներում լույս տեսած մամուլի չթերթված էջերում՝ դրանով իսկ խանգարելով ի մի հավաքել նրա կյանքի բազում մանրամասներ եւ անգամ էական փաստեր։

Թեբեյանն ապրել է հայ ժողովրդի պատմության ամենաճակատագրական շրջաններից մեկում, որը Դ. Վարուժանն իր «Մատյանն ահա» քերթվածում դիպուկորեն բնութագրեց «Հիսուսի պես կարելվեր», եւ տառապալից ու կորստաբեր այդ ժամանակի նման ունեցավ սլացման ու անընթացի ոգեւորություններ եւ նույնքան ու ավելի ապրեց տանջանքի ու ողբերգությունների անպատմելի փոթորկումների մեջ։ Թեբեյանը, ինչպես իր ժամանակակից շատ գրողներ, միեւնույն ժամանակ եղավ հասարակական ու ազգային գործիչ, խմբագիր ու ուսուցիչ, գործնական մասնակիցը հայոց կյանքի պայքարներին եւ որպես հրապարակախոս ու գրող՝ գրեց այդ ամենի մասին ու իր ապրած կյանքով ու գործով իր ժողովրդի մարդկային հոգիների մեջ ջանաց եկեղեցի կանգնեցնել, քանի որ հայ մարդու ու Հայաստան աշխարհի անբեկալի պաշտամունքով էլ լեցուն։

Լինելով արեւմտահայ «արվեստագետ սերնդի» (Դ. Վարուժան, Սիամանթո, Ռ. Սեւակ) ոսկե փաղանգի դեմքերից մեկը՝ նա ստեղծեց մի գրականություն, որը հարիւստելու է գալիք հայության հետ, նրան մղելու գնահատել գեղեցիկը եւ արժեւորել արդարությունը։

Վահան (*Վահան անունով է մկրտվել, քանի որ ծնվել է Սուրբ Վահան Գողթնեցու*

(մ. թ. 8-րդ դար) տոնին։ Նախախնամությունը Թեբեյանին պիտի տար ոչ միայն սրբի խելացիությունն ու ուշիմությունը, այլեւ նրա կյանքին բնորոշ թափառական դեգերումները) Թեբեյանը ծնվել է 1878 թ. հունվարի 8-ին (հին տոմարով՝ 21-ին) Կոստանդնուպոլսի Օրթագետ (Միջագյուղ) թաղամասում։ Նա Գալուստ եւ Եղիսաբեթ ամուսինների վերջին՝ հինգերորդ զավակն էր։ Մայրը, որ նշանվել էր 9 տարեկանում եւ դրանով իսկ վերջ տվել դպրոց հաճախելուն ու ազատ մանկությանը, իր ամուսնուն առաջին անգամ տեսել է հարսանիքի օրը. Թեբեյանին ունեցել է 40 տարեկանում։ Ինչպես Թեբեյանն է գրում «Ծնունդ» վերնագրված իր բանաստեղծությունում, իր «ծերացած» ծնողները «օր մ'ալ ... զարմանքով ու երկիւղով տեսան» նրա գալը աշխարհ... Ծնողները կեսարացի էին (*գեղ-դաստանի նախկինները Պարսկաստանից էին ներգաղթել եւ բնակություն հաստատել Կեսարիայից ոչ հեռու գտնվող Թալաս գյուղում*), որի համար Թեբեյանին եւս երբեմն կեսարացի էին համարում։ Ինքը՝ Թեբեյանը, իրեն երբեմն կես կեսարացի է համարել։ Տնտեսական պատճառներով ընտանիքը տեղափոխվել է Իսկյուտար։ Թեբեյանից գատ, ով գերդաստանի կրտսեր զավակն էր, նրանք ունեին եւս երեք որդի եւ մեկ դուստր։ Հայրը մահացել է 60 տարեկանում՝ 1889-ին, երբ Թեբեյանը հազիվ 10-ը տարեկան էր, ավագ եղբայրը՝ Տիգրանը, մահացել է 30 տարեկանում, երբ Թեբեյանը 8 տարեկան էր, ինչն անանց հետք է թողել Թեբեյանի բնավորության վրա՝ նրան դարձնելով մելամաղձոտ ու «անժպիտ մարդ», իր բառերով ասած՝ «մեկեն մեծացրին»՝ իրեն դարձնելով «մարդոց մեջ մարդ»։ Պատանու ներաշխարհի վրա նաեւ մեծ ազդեցություն են գործել տանը պահվող Գարիբալդիի եւ Վարդան գորավարի պատկերները։

Թեբեյանն իր կրթությունն ստացել է Իսկյուտարի Իճատիեի Ներսիսյան դպրոցում, ապա ուսանել Պերպերյան վարժարանում։ Թեեւ դեռ երկու տարի ուներ վարժարան ավարտելու համար, սակայն 1891-ին այն կիսատ է թողել Գ. դասարանից եւ հեռացել է ու ուսումը շարունակել Ազգային կեդրոնական վարժարանում, այնուհետեւ երկու տարի աշխատել ապահովագրական ընկերությունում՝ որպես գրագիր։ Ուսումնառության տարիներին Թեբեյանի ուսուցիչներից են եղել Ռեթես Պերպերյանը, Մելքոն Կյուրճյանը (Հրանդ), Միքայել Ասքանազը, իսկ վարժարանային ընկերներից՝ Սուրեն Պարթեյանը, Արշակ Ալպոյաճյանը եւ Միքայել Շամտաճյանը, որոնց ազդեցությունը եւս խթանել է Թեբեյանի գրական հակումները։ Արշակ Ալպոյաճյանը վկայում է, որ պատանի Թեբեյանի վրա մեծ հետք է թողել նաեւ եղիա Տեմիրճիպաշյանը, ով մի քանի տարի բնակվել է Թեբեյանի հայրական տան հարեա-

նությամբ եւ իր խորհրդավոր կեցվածքով ակնածանք առաջացրել շրջապատի մեջ (*այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ալպոյաճեան Ա., Վահան Թեբեյան իր հանրային մարդ եւ հրապարակագիր, Պէրյուք, 1988, էջ 19-20*)։

Թեբեյանը գրել սկսել է 9 տարեկանից, իսկ արդեն 1890-ին Պերպերյանի կրտսեր դասարանի իր ընկերների հետ լույս ընծայել «Սիւզ» ձեռագիր թերթը, մասնակցել Ա. Ալպոյաճյանի եւ Հր. Եսայանի «Լուսին» անունը կրող՝ նույնպես ձեռագիր թերթի աշխատանքներին։ Առաջին տպագիր գործը, որն ընդամենը էջ ու կես էր, լույս է տեսել Արփ. Արփիարյանի խմբագրած Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթի 1894 թ. Նոր տարվա համարում՝ «Կաղանդը Կեսարիոյ մէջ» վերնագրով, որը ստորագրված էր Բ. Կ. Մ.։ Սկսում է թղթակցել նաեւ «Տեսարան» հանդեսին, որտեղ տպագրվում է առաջին գեղարվեստական գործը՝ «Հպարտները» պատմվածքը։ 17-18 տարեկան պատանին ականատեսն ու մասնակիցն էր դառնալու իր կյանքի վրա նույնպես մեծ հետք թողած երկու իրադարձությունների՝ 1894-ին իր մորեղբոր՝ Մանուկ Արզգայանի շեն տան հրդեհվելուն եւ ձերբակալվելու վախից՝ մոր ստիպմամբ իր իսկ ձեռքերով տանը պահվող հայերեն գրքերի՝ «...Սրուանձտեանց, Աթովեան, Նալբանդեան, Բաֆֆի, Պոռոշեանց, Շահագիզեանց ... Պեշկիթաշլեան...», ամեն անոց, որոնց մեջ «Հայաստան» անունը կը հնչեր...» արյամբ, որի մասին նա պատմում է «Անահիտում» տպված իր «Խարույկը» պատմվածքում (*«Անահիտ», Փարիզ, Բ. տարի, 1900, թիւ 9-11*)։

Շարունակությունը՝ էջ 4



Գործ՝ Ալ. Սարուխանի

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԵՎ ՎԱՅԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ. ՄԻ ԵԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

Սկիզբը՝ 2017-ի

թիվ 20, 22-24, 2018-ի թիվ 1

Հայարտությամբ արձանագրելով, որ «դարի մեծ գրողատը»՝ Նիկոլ Աղբալյանն է առաջինը Ե. Չարենցին հայտնաբերել ու արժանավորապես գնահատել, Վ. Նավասարդյանը բարեխղճորեն հետեւել է Չարենցի գեղարվեստական մտածողության զարգացման բարդ ու դժվարին ընթացքին ու նրա հանդեպ Ն. Աղբալյանի վերաբերմունքին: Կուլտուր-պատմական դպրոցի՝ ժամանակ, ռասսա, միջավայր սկզբունքից ելնելով՝ նախ նա ներկայացնում է այն ժամանակն ու միջավայրը, որոնց մեջ հասակ էր նետում դարի խոշորագույն բանաստեղծը: Ուրեմն՝ անխուսափելի էր 1920-30-ական թթ. գրական կյանքի երեւոյթների վրա կենտրոնացումը:

Բնականաբար, թե՛ «Երեքի» դեկլարացիայի, թե՛ գրական մյուս խմբակցությունների գործունեության հետ առնչվող երեւոյթները քննարկելիս Վ. Նավասարդյանը պետք է հենվեր ժամանակի ողջամիտ քննադատների՝ Ն. Աղբալյանի, Հ. Սուրխաթյանի, Պ. Մակինցյանի եւ ուրիշների դիտարկումների վրա: Այդ եւ վկայում այն ընդարձակ քաղվածքները, որոնք իր խոսքը հիմնավորելու համար իր աշխատության մեջ բերել է Վ. Նավասարդյանը՝ երբեմն մեկնաբանելով, երբեմն էլ՝ առանց մեկնաբանության:

Արժեքավոր եւ ուսանելի են հատկապես Ն. Աղբալյան - Ե. Չարենց գրական բարեկամությանը տրված Նավասարդյանական

մեկնաբանություններն ու պարզաբանումները, որոնք նոր լույս են սփռում բանաստեղծի ու քննադատի թե՛ մարդկային, թե՛ գրական առնչությունների վրա, բացահայտում դարաշրջանի գրական բարդ ու հետաքրքիր կյանքի՝ ստվերում մնացած շատ կարեւոր մանրամասներ:

Ն. Աղբալյանի «Պոեզիկարծիքը»՝ գրված «Երեքի» դեկլարացիայի շրջանում լույս տեսած «Պոեզիկոմնայի» եւ մյուս երկերի առթիվ, սաստող ու սթափեցնող դեր է կատարել ժամանակավոր սայթաքումների եւ անկումների շրջապատում հայտնված Չարենցի կյանքում: Քննադատը հեռվից՝ Ալեքսանդրիայից, հետեւել է բանաստեղծին, որն իր հերթին նրան է ուղարկել իր տպագրած բոլոր գրքերը՝ չեղմ մակագրություններով: Սաստը կատարել էր իր դաստիարակիչ դերը, եւ Աղբալյանն էլ տեղյակ էր դրան. Նավասարդյանն «Ակոսից» իր գրքում բերել է Աղբալյանի բնութագրական խոսքը. «Լսեցի, որ Նամակս ու կարծիքս տեղ են հասել: Ասում էին, որ գոհ չէր մնացել եւ գրածներս համարել էր «անպատկառ»... Ինձ թվում է, սակայն, որ **հանդիմանությունս ու կշտամբանքս զուր չեն անցած: Ե. Չարենցը շտկել է իր բարքն ու ստեղծագործությունը: Իր «Եպիկական լուսաբաց»-ի մեջ տեղ գտած հատվածները ցույց են տալիս մի ճիգ՝ մեծ ոգիների ընկեր դառնալու: Երեւում է, որ ինքն իր բուն է հավաքած իրեն, սթափված է, ցուփ կյանքից ու զգացումներից ձեռն է քաշած եւ**

բարձրանում է դեպի անանց գեղեցկություններ» (Էջ 33, ընդգծ. - Ս. Մ.):

Վ. Նավասարդյանը հոգեբանորեն հիմնավոր ու անառարկելի մի այլ ենթադրություն է ներկայացնում. «Ոչ ոք կարող է ասել, թե բանաստեղծը Ն. Աղբալյանից իր բաժանման օրից մինչեւ իր տաժանելի մահը - ո՛ր եւ երբ ի՞նչ ապրումներ ունեցավ եւ ի՞նչ տառապանքներ կրեց. ու թերեւս ոչ թե մեկ (Ն. Աղբալյանի գրությունը առնելով), այլ մեկից ավելի անգամներ (նաեւ այդ գրությունից հետո) **հոգիով ու սրտով նա գրույցի նստեց այն մարդու հետ, որի մեջ միշտ տեսած էր իր առաջին ուսուցչին եւ գրական առաջնորդին, որին միշտ հարգած ու սիրած էր**» (Էջ 35, ընդգծ. - Ս. Մ.): Որպես ասվածի հիմնավորում՝ Վ. Նավասարդյանը բերել է Չարենցի մի խոստովանությունը՝ «Ես այն չեմ այլեւս» բանաստեղծությունից.

Գզվեց ինձ սիրով մի ձեռք հայրենի, եվ ես մի գիշեր իմաստուն դարձա:

Ամենից մեղմ մոտեցումով պիտի ասենք, որ, այո՛, եղել է փոխադարձ վերաբերմունք եւ գրական անկեղծ բարեկամություն: Չարենցը գրեթե ամեն առիթով սիրով հիշել ու գնահատել է իր ուսուցչին ոչ միայն նրան նվիրած իր գրքերի շեղմ մակագրություններում, այլեւ մի քանի բանաստեղծական հատվածներում, որոնց մեջ նա ակնարկվում է ազգանվան սկզբնատառով՝ Ա., ըստ երեւույթին՝ վտարանդի Ն. Աղբալյանի



հանդեպ իր վերաբերմունքը խորհրդային չարամիտ հետաքրքրասերներից թաքցնելու համար:

Ահա եւ «Եպիկական լուսաբացում» գետեղված «Սիրելի Ա.-ին» խորագրով բանաստեղծությունը, որն Աղբալյանն ինքն էլ «ներքին զգացումով» ըմբռնել է, թե հենց իրեն է ուղղված.

*Ես չեմ մոռացել քեզ, բարեկամ,
Ես հիշում եմ քեզ կրկին, կրկին,
Ինչպես անցորդը թափառական
Հիշում է միշտ անցած ուղին: -
Սիրով է հիշում նա ուղին հին,
Գուցե թախիծով, սակայն երբեք
Նա չի ցանկանա կրկին, կրկին
Թողնել հեռուներն ու դառնալ հետ,
Երբ անցած ուղին հուշով անշեշ
Խոցում է ինչպես կարոտի նետ, -
Խեղդում է նա այդ կարոտն իր մեջ,
Որ երբեք, երբեք չդառնա հետ:*

Շարունակությունը՝ էջ 4

Սկիզբը՝ 2017-ի

թիվ 22-24, 2018-ի թիվ 1

Վիլյամ Սարոյանի հաջորդ հայտնի երկը «Ծիծաղի առարկա» վեպն է: Սա սեւ հեգնանք պարունակող մի ստեղծագործություն է, որը եզրափակում է ամերիկահայ գրողի երկերի վերջը նշված ցիկլը: «Ծիծաղի առարկա» վեպը սաստկացնում ու էլ ավելի որոշակի է դարձնում Նախորդ երկու գրվածքներում առկա ներքին կոնֆլիկտը: Խոսքը հատկապես վերաբերում է այն կրքերին, որոնք պառակտում են մտցնում ազգային փոքրամասնության պատկանող ամուսնու եւ նրա կնոջ միջեւ: Պատմությունը, որի իրադարձությունները տեղի են ունենում Ֆրեզնոյի խաղողի այգիներում, հասնում է մինչեւ այն սահմանագիծը, որտեղ մարդկային հպարտությունը եւ ներողամտության կորուստը կարող են ընտանիք փլուզել: Էվան Նազարեանը տեղեկանակով, որ իր կինը հղի է այլ տղամարդուց, պոռթկում է ցասումից: Բայց ինչպես Սարոյանի Նախորդ գործերում, ընթերցողն ի գործու չէ լիովին հասկանալու Էվանի ցասումը՝ առանց հաշվի առնելու նրա ազգային մտածելակերպը, ինչն էլ նրան դարձրել էր չափազանց հպարտ եւ մեկնակյաց: Նկարագրելով իր հոր ճակատագիրն Ամերիկայում՝ Էվանսն իր եղբորն ասում է հետեւյալը. «Ի՞նչ է անում այդ ծեր մարդը: Նա գալիս է Ամերիկա, ժրաջան աշխատում եւ երեք տարի հետո մարդ է ուղարկում իր կնոջ ու որդիների հետեւից: Նրանք գալիս են Ամերիկա, իսկ հետո նրանք եւս մեկ որդի են ունենում: Նա մտածում է, թե ինքը վերջապես կունենա այն ընտանիքը, որի մասին երազել էր: Նա ուզում էր ունենալ շատ տղաներ եւ աղջիկներ: Երազում էր, որ իր ողջ ընտանիքը լավ լինի, սակայն Ամերիկա տեղափոխվելուց երկու տարի անց նրա կինը մահանում է: Նա չի ուզում նայել որեւէ այլ կնոջ: Նա չի կարող նման բան անել: Նա դառ-

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԵՐԿՐԻ ԱՆՃԱՐԻՆԵՐԸ



նում է մի տխուր ծերունի եւ աշխատում է Նյու Ջերսիի Նահանգի Պատերսոն քաղաքի մի խոցուկ սիգարի խանութում: Այժմ նա ապրում է իր որդիների համար: Հայրի՛կ, դու գիտես, թե քեզ հետ ինչ է կատարվել: Այժմ նույն բանն ինձ հետ է կատարվում: Բայց ինչո՞ւ կյանքն այսպես դասավորվեց: Նա ի՞նչ մեղք էր գործել: Իսկ ես ի՞նչ մեղք եմ գործել (տե՛ս Saroyan W., The Laughing Matter (Garden City, N.Y., Doubleday, 1953), էջ 73):

Էվանսի հարցադրումները վերահաստատում են Սարոյանի Նախորդ երկերի գլխավոր հերոսների մտավախությունները՝ ավելի յուրահատուկ ձեւով: Տնողի կորուստը երիտասարդ հասակում եւ ընտանեկան կապերի խզումը, մշակութային ուժացման պատճառով, գրկել են նրան հուզական խարսխից: Ապօրինածին երեխային գուրգուրելու նրա անկարողությունը մատնանշում է նրա սեփական «ես»-ի թուլությունը: Նա այդպես էլ չէր սովորել սիրել այդ «ես»-ը: Այսպիսով, նա չէր արձագանքել իր կնոջ խնդրանքին՝ ընդունել ապօրինածին երեխային. «Ես կսիրեմ նույնիսկ օտարին: Ես կսիրեմ առանց զղջման ... բայց արդյո՞ք իմ օ-

տարված հոգում կա տեղ նման սիրո համար: Եթե կա՝ որտե՞ղ է դա, Սվո՛ն» (տե՛ս Saroyan W., The Laughing Matter (Garden City, N.Y., Doubleday, 1953), էջ 165):

Ինչպես «Ռոջ Վահրամ» երկում, Էթնիկ խմբի անդամները մի կողմից պաշտպանում, իսկ մյուս կողմից հանդիմանում են գլխավոր հերոսին: Երբ Սվոնն ինքնասպան է լինում, Ալբունը ենթադրում է, որ նրա ընտանիքի անկայունության պատճառն այն էր, որ նրա կինն այլազգի էր: Մյուս կողմից՝ Դեյրը՝ Էվանսի եղբայրը, արդարացնում է կնոջ վարքագիծը: Նա պնդում է, որ տալամարդը, երկար ժամանակ մենակ թողնելով կնոջը, տեղիք է տվել նրա դավաճանության համար: Այսպիսով, Էվանսը դրժել էր իր պարտավորությունները՝ լինել իր ընտանիքի կենտրոնում. «Ընտանիքն ամենակարեւոր բանն է: Եթե անկուրջ ես վերաբերվում ընտանիքին, խորտակում ես ամեն բան» (տե՛ս Saroyan W., նույն տեղում, էջ 228): Ինչպես խաղամուկն է դասեր առնում իր անձնական կորուստներից, այնպես էլ Դեյրն է կրկնում Սարոյանի այն կարծիքը, թե մենք հայտնագործում ենք ճշմարտությունը տարիների ըն-

թացքում, իսկ ընտրությունը հպարտության ու սիրո միջեւ նույնքան կամայական է, որքան մետաղադրամ նետելը. «Դրամն օդում նետելով՝ որոշել լինել բարի՞, թե՞ հպարտ» (տե՛ս Saroyan W., նույն տեղում, էջ 121): Էվանսն իր կնոջը երկընտրանքի առաջ է դնում. «Ես կսիրեմ քեզ, եթե դու ազատվես երեխայից»: Նկարագրական պարզությամբ աչքի ընկնող սարոյանական այս դրվագները երեսն են բերում գրողի ընտանեկան իդեալը: Այս կարճ դրվագներում պատմությունը ձեռք է բերում հանգստություն բերող համաչափություն, որը խորհրդանշում է այնպիսի կատարելություն, որը բացակա է թե՛ Էվանսի եւ թե՛ ուրիշ մեկի ընտանիքում: Հաջորդ դրվագում ընթերցողը տեսնում է, թե ինչպես են ծնողներն իրենց երեխաներին տանում եկեղեցի: Սա կարծես ընտանեկան ծես լիներ:

«Եկեղեցին ուներ ապակեկարներով մեծ պատուհաններ, եւ Ռեդն ու Էվան ուզում էին դրանք ներսի կողմից տեսնել: Նրանց պատկերացմամբ եկեղեցին գրեթե այդպիսի տեսք պետք է ունենար: Կառույցը փայտաշեն էր եւ ներկված սպիտակ: Ուներ գեղեցիկ զանգակատուն: Երբ նրանք բարձրացան այդտեղ, զանգը դողանքով էր: ... Մի կին երգեհոն էր նվագում: Եկեղեցու պատուհաններին գեղեցիկ պատկերներ կային: Առաջինի գույնը հիմնականում կապույտ էր, երկրորդինը՝ հիմնականում կարմիր, երրորդինը՝ մեծ մասամբ կանաչ, չորրորդինը՝ դեղին: Եկեղեցի մուտք գործող լույսը գունավորվում էր այդ երանգներով: Կառույցի ներքնամասը կուրացնող փայլ ուներ, բայց միեւնույն ժամանակ այն հոգեկան անդորր էր պարգեւում» (տե՛ս Saroyan W., նույն տեղում, էջ 149): Վեպի ավարտին սյուժեն ա-

րագ զարգացում է ապրում եւ էլ ավելի խճճված դառնում: Այս առնչությամբ Էլիզաբեթ Բաունեն իր գրախոսականներից մեկում ասում է հետեւյալը. «Սարոյանի գրվածքում չափազանց շատ իրադարձություններ են կատարվում, սյուժեն շատ արագ եւ կատաղի կերպով է զարգանում ... համապատասխանաբար մարդը կորցնում է չափի զգացողությունը» (տե՛ս Bowen E., «In Spite of Words», New Republic 128 (March 9, 1953), էջ 19):

Սվոնի հղիությունը եւ այնուհետեւ ինքնասպանությունը ոչ միայն խաթարում են Էվանսի ընտանեկան պատկերացումների համաչափությունը, այլեւ մի շարք ողբերգությունների սկիզբ են դառնում. Էվանսը պատահաբար վիրավորում է իր եղբորը, ինչի հետեւանքով վերջինս մահանում է: Սվոնի ենթադրյալ սիրեկանն ինքնասպան է լինում՝ թողնելով այնպիսի փաստաթղթեր, որոնք ապացուցում են նրանց հարաբերությունների անմեղությունը: Այնուհետեւ Էվանսը որոշում է գնալ տուն, որպեսզի հոգ տանի իր երեխաների մասին, սակայն կես ճանապարհին նրա մեքենայի անիվը պայթում է, եւ նա տեղ չի հասնում: Այսքան շատ փորձություններ ու ծախսողումներ մեկ պատմության մեջ արդեն իսկ զավեշտի են վերածվում եւ ծիծաղի առիթ դառնում: Պատմության վերջաբանն իսկական գիշերային մոծավանջ է դառնում: Այդ մոծավանջում գրողը դեմ հանդիման կանգնում է իր կյանքի ամենացավալի խնդիրների առջեւ: Նա իրեն տանջող բոլոր մեղքերը բարդում է դառն բախտի վրա եւ ի վերջո խույս տալիս դրանցից՝ փախուստի միջոցով:

Շարունակությունը՝ էջ 5



Գործ՝ Ալ. Սարգսյանի

Սկիզբը՝ էջ 2

1895-ին Արշակ Զոպանյանը Կ. Պոլսում հրատարակվող իր «Ծաղիկ» թերթում տպագրում է Թեքեյանի «Ծովեզերքին վրայ» եւ «Ջուրեղան» արձակ քերթվածները՝ Վահան Թեքեյան ստորագրությամբ։ Այդուհետ գրողն սկսում է թղթակցել Կ. Պոլսում, Փարիզում, Եգիպտոսում, Իզմիրում ու մի շարք այլ վայրերում լույս տեսնող հայ մամուլի զանազան օրգաններին։

1896-ին Թեքեյանն անդամագրվում է Հնչակյան կուսակցությանը։ Խուսափելով շարդերից, անիրականանալի թողնելով Արեւմտահայաստանի գավառներ մեկնելու եւ հայրենակիցներին օգտակար լինելու իր ծրագրերը, կանխագալով իր անձին սպասվող վտանգները՝ ինչպես կուսակցական, այնպես էլ առեւտրական գործերով մեկնում է Անգլիա (Լիվերպուլ), հաջորդ տարի տեղափոխվում Ֆրանսիա (Մարսել),

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆՔԻ ՄԵՑ ԱՌԿԱՆ ՄԻ ԿՅԱՆՔ

ուր ապրում է շուրջ հինգ տարի։ Այս ընթացքում աշխատակցում է «Վաղվա ձայնին», «Արմենիային», «Ամառիտին», «Մասիսին», «Նոր կյանքին», թարգմանություններ կատարում ֆրանսերենից, անգամ բանաստեղծություններ գրում այդ լեզվով, մտադրվում սովորել գերմաներեն՝ «բնագրեն կարդալ ու թարգմանելու համար», թատերգություն եւ նորավեպ գրելու փորձեր կատարում, նամակագրական կապեր հաստատում մի շարք հայ գրողների ու մտավորականների հետ, ընտրվում Մարսելի հայության ընդհանուր ժողովի նախագահ, կազմակերպում մշակութային ու գրական միջոցառումներ, մի շարք բանաստեղծությունների թվում գրում է նաեւ «Պատմութիւնը ու ներկան» ծավալուն քերթվածը, որի վերաբերյալ Ա. Զոպանյանին գրել է. «...ճշման տակ (նկատի ունի Վարդանանց տոնին նվիրված հանդեսի կազմակերպիչներին - Ա. Ա.) կրցա տեսնիլ, թէ կրնամ եղեր քիչ մը երկարաշունչ բաներ ալ գրել» (Թեքեյան Վ., Նամականի, 1983, էջ 98։ Այս գրքից բերված մեջբերումները տեքստում այսուհետեւ կնշվեն միայն էջերով - Ա. Ա.):

Այս ընթացքում Սուրեն Պարթեւյանի եւ Լեւոն Բաշալյանի հետ եռեռդիակցում է «Գիշերապահը» գործը։ 1900-ին «Ամառիտում», Վ. Տիրանյան ստորագրությամբ, Թեքեյանը տպագրում է «Իրիկուն» եւ «Իրիկուն աղօթքը» բանաստեղծությունները, որոնցում նկատելի են որոշ խորհրդապաշտական երանգներ, հակում դեպի վերացական հույզերն ու զգացումները։

Մի շարք հայ մտավորականների (Ս. Պարթեւյան, Ա. Շաքյան, Գ. Ֆնտզյան...) հետ Թեքեյանը 1901-ին Փարիզում մասնակցում է «Ժողովուրդին համար» ամսաթերթի հիմնադրմանը, այստեղ տպագրում Դ. Վարուժանի գնահատող հոդված։ Իր ստեղծագործական տարիների ընթացքում գրած արձակ ու չափածո անտիպ ու տպագրված բանաստեղծությունների մի

մասը Թեքեյանն ընդգրկում է Նույն տարում Փարիզում լույս տեսած «Հոգեք» ժողովածուում։ Ասես կանխագալով գալիք գրի ժամանակները՝ Թեքեյանի բանաստեղծական շատ տողեր ու պատկերներ լցված էին տխրության ու հիասթափության պատկերներով։ Գրքի առաջին բանաստեղծությունը՝ «Առաջին մահը», որն արտահայտում է Աստծո նկատմամբ բանաստեղծի ունեցած դիրքորոշումը, սարսափ է առաջացրել Եղիա Տեմիրճիպաշյանի մեջ։ Գրքում հատկապես շատ են կյանքի նկատմամբ հեղինակի ունեցած անձկությունները, ներքին վրդովմունքը, թախծի տրամադրությունները, Ա. Զոպանյանի խոսքերով ասած՝ «հագուրդ չգտած իղձերու» դրսևորումները, որոնց մի մասն էլ գալիս էր գրողի ընտանիքի պատուհասած մահերից։

Թեքեյանի բանաստեղծությունների առաջին գիրքը, ի տարբերություն Սիմանթոյի, Դ. Վարուժանի, Ռ. Սեւակի առաջին գրքերի, հայտնություն չեղավ գրական աշխարհի համար, սակայն իր վերնագրով խտացումը դարձավ հեղինակի գրական ողջ ուղու։ Ժողովածուն հավանություն չաբժանացավ նաեւ գրաքննադատության կողմից։ Ինչ ասել կուզի. Թեքեյանի առաջին գրքի գրախոսականներից մեկին տրված վերնագրի՝ «Հարբխոտ բանաստեղծ մը», որը տպվեց Կահիրեի «Փարոս» թերթում, հեղինակը Միքայել Կյուրճյանն էր (տե՛ս Նշված երկօրյան, 1901, հոկտեմբերի 17)։ Բայց ասել, որ ստեղծագործական առումով տարին բեղուն էր, սխալ կլինի, քանի որ հենց 1901-ին Թեքեյանը գրեց իր գլուխգործոցներից մեկը՝ «Կ'անձրեւէ, տղա՛ս» բանաստեղծությունը՝ սիրուց «խաբուած» ու ճակատագրի «գոց» դռան առջեւ կանգնած տղային հարցում անելով.

Կ'անձրեւէ՛ երբեմն հոգիիդ մէջ ալ,
Կը մըսի՛ սիրտդ, եւ կը դողդողա՛ս...

1902-ին Թեքեյանը վեց տարվա ընդմի-

ջումից հետո վերադառնում է Կ. Պոլիս, սակայն 1896-ին քաղաքից գաղտնաբար հեռացած լինելու պատճառով ձերբակալվում եւ երկու շաբաթ, իր խոսքերով ասած, վանելելով Պոլսի «բանտի հիւրասիրութիւնը»՝ ետ է ուղարկվում Մարսել։ Այստեղից մեկնում է Համբուրգ, շուրջ տարի ու կես մնալուց հետո նորից վերադառնում Մարսել։

Թե՛ համբուրգյան, թե՛ մարսելյան կյանքը ո՛չ ստեղծագործական, ո՛չ էլ տնտեսական առումով Թեքեյանին չի գոհացրել։ Թեւեւ հենց 1903-ին է գրել «Գեղոն Սոսեաց անտառին» քերթվածը, որի մասին Հ. Օշականը (Յ. Զիւլֆէճեան ստորագրությամբ) «Մեհեան» հանդեսում գրելու էր. «Յեղափոխական գրականութեան տուած ամբողջ շքեղանքին, փաղիւն պատկերներին եւ արիւնավառ տեսիլներուն մէջ քիչ կայ հատուած, որ գաղափարին բարձրութեամբ, ձեւի նորութեամբ, թելադրած յուսահատութեան խորութիւնովը հաւասարի «Գեղոն Սոսեաց անտառին» քերթուածին» («Մեհեան», Կ. Պոլիս, 1914, թ. 6, էջ 88)։

Ապրուստի շատ թե քիչ միջոցներ հայթայթելու համար նա ծրագրում է փոխադրվել Փարիզ, բայց չի գնում։ Պատճառներից մեկն էլ, ինչպես նշում է Ա. Զոպանյանին 1903-ին գրած մի նամակում, իր բնավորության «տկարութիւնն էր»։ «... Եղած տեղես բաժնուելու ու անծանոթին դիմելու՝ միշտ կապած, կաշկանդած է գիս» (էջ 115)։ Վերոհիշյալ նամակը նշանավոր է նաեւ նրանով, որ Թեքեյանը բողոքում է իր վաճառական ընդունակություններից. «... գէշ ու գէշն գէշ վաճառական մըն եմ... արդէն երբեք չեմ կարծեր, որ գրագետ մը կարենայ նաեւ յաջող առուտորի մարդ ըլլալ. այնպէս բնական հակառակութիւններ կան երկուքին մէջը, ու երկուքն ալ այնպէս տիրաբար կը պահանջեն ամբողջական նուիրումդ իրենց» (Սույն տեղում)։

Շարունակությունը՝ էջ 6

ԵՐԻՇԵ ԶԱՐԵՆՑ ԵՎ ՎԱՅԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ. ՄԻ ԵԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սկիզբը՝ էջ 3

Մեր խորին համոզմամբ՝ Նավասարդյանի գրքում առավել կարեւոր են «Էպիկական լուսաբաց» եւ «Գիրք ճանապարհի» ժողովածուներին նվիրված էջերը եւ մանավանդ բուշելիկ Զարենցի ստեղծագործության մեջ նրա ազգային խիզախ մտածողության, ազգային ոգու դրսևորման բացահայտումները, հայության ճակատագրի եւ համամարդկային խնդրների շուրջ փիլիսոփայական խորհրդածություններին տրված Նավասարդյանական ինքնատիպ բնութագրումները, որոնք այսօր էլ լուրջ հետաքրքրություն են ներկայացնում ընդհանրապես գրականագիտության եւ մասնավորապես՝ չարենցագիտության համար։

Նավասարդյանը գրեթե ամբողջ խորությամբ է ընկալել Զարենցի «վերջին մատյանի»՝ «Գիրք ճանապարհի»-ի բովանդակությունը, նրա կառույցը, գեղարվեստական յուրահատկություններն ու նշանակությունը եւ այն մթնոլորտը, որի պայմաններում ծնունդ առավ այդ հանճարեղ մատյանը։ Նա խորապես հասկացել էր, թե ինչու էր իր շուրջն այդպիսի փոթորիկ բարձրացրել այդ գիրքը, «մի փոթորիկ, որ քիչ ալելի ուշ մարդկանց ուսերից նաեւ գլուխներ տարավ ու տարավ» (էջ 64)։

Անշուշտ, Վ. Նավասարդյանը Զարենցի գրքին, նրա բոլոր ստեղծագործություններին մոտեցել է հայ մտավորականի եւ կուսակցականի դիրքերից՝ փորձելով դաշնակցականի դիտանկյունից նրանց մեջ հայտնաբերել խորհրդային կարգերի դեմ Զարենցի թաքուն կամ բացահայտ ընդդիմությունը դրսևորումները։ Այս պատճառով էլ նրա դիտարկումները երբեմն ունեն ընդգծված միակողմանիության երանգներ։ Սակայն դա չի խանգարել, որ առավել հաճախ բանականությունն ու ողջամտությունը գերազանցեն աչառությանը, նահանջի կուսակցական նեղմտությանը, եւ չարեն-

ցյան երկերն ստանան արդարամիտ արժեւորումներ եւ այնպիսի բնորոշումներ, որ անկարելի էր խորհրդային երկրում ակնկալել Զարենցի եւ նրա բախտակիցների համար ստեղծված մեծ լուրջ ժամանակներում եւ անգամ նրանից հետո էլ։

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Զարենցի վերջին մատյանի՝ «գլխավոր կտորների»՝ «Heinrich Heine» (Հայնրիխ Հայնե), «Պատմության քառուղիներով» եւ «Մահվան տեսիլ» ստեղծագործությունների վերլուծությունները, ինչպես նաեւ Հայաստանի խորհրդային գրողների երկրորդ համագումարի կյուրերի ինքնուրույն մեկնությունները, որոնցով բացահայտվում են բազմաթիվ առեղծվածներ։ Դրանց գաղտնագրծումն այն ժամանակներում ի վիճակի էր կատարելու միայն Նավասարդյանի նման խորագետ, բազմահմուտ, ողջախոհ մտավորականը։ Նրան հաջողվել է չարենցյան այլասացությունների վերծանությամբ բացահայտել թաքուցյալ ճշմարտությունները՝ Զարենցի կերպավորած անանուն հերոսների մասին, պարզել «Մահվան տեսիլ» պոեմում Զարենցի կերպավորած Դանտեի անունից այլաբանորեն ասված միակ խոսքի գաղտնիքը՝ «պիղծ սեղանի» գոհի՝ արեւմտահայ նահատակ բանաստեղծների եւ «եղեռնի հնձանին ընծա» հայության, նրա ազատագրական պայքարի գաղափարախոսների, այդ գաղափարներն իրագործած մարտիրոս զավակների ու ազգային հերոս գործիչների մասին, ճանաչել ու մատնացույց անել նրանց իրական նախատիպերին, որոնց անկարելի պայմաններում ու ժամանակներում ուղղակի իմաստով հանդգնել է կերպավորել Զարենցը՝ առանց նրանց իրական անուններն անմիջաբար տալու։

Իհարկե, Վ. Նավասարդյանի բնութագրումներում ու խորհրդածություններում կան որոշ խոցելի կետեր, բայց նա, ի տար-

բերություն խորհրդային որոշ չարենցագետների, «Գիրք ճանապարհի»-ի հիշյալ երկերում՝ մանավանդ «Մահվան տեսիլ» պոեմում, նիհիլիզմի՝ մեր անցյալը հանիքավի վարկաբեկելու արտահայտություններ չի տեսնում ու նրան անհեթեթ մեղադրանքներ չի հասցեագրում։ Հակառակ բուշելիկյան պաշտոնական կեղծ քարոզչության՝ «ժողովրդի թշնամի» հորջորջված կուսակցության ու նրա զավակների անձնվեր գործունեության չարենցյան բնութագրումների մեջ, ընդհակառակը, տեսնում է մեր ժողովրդի մոտիկ անցյալի պատմության ազնիվ ու անկողմնակալ գնահատությունը։ Առանձնակի սուր դիտողականությունը է նա հանդես բերել Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադիրներից մեկի՝ Զորիստափոր Միքայելյանի՝ Զարենցի կերտած կերպարը քննելիս։ Հանգամանալից նրա բացատրություններից պարզ են դառնում ազգային դասական այդ կուսակցության հերոսական գործունեությունը, քաղաքական նպատակները, նրա ձեւավորման փուլի անձնվեր գործիչների գիտակցված զոհաբերությունները, հաղթանակներն ու ցավալի ողբերգությունները։ Տպավորիչ են հատկապես Խանասորի արշավանքի եւ Բանկ Օտոմանի գրավման չարենցյան բնութագրումները մեկնությունները, որոնցով հասկանալի է դառնում, որ Զարենցը հետամուտ է եղել արդեն պատմություն դարձած ազգային դեմքերի եւ իրադարձությունների գեղարվեստական ճշմարտացի պատկերման։

Այսպես է բացահայտվում պատմական, գեղարվեստական ու գիտական միավորյալ ճշմարտությունը։

«Զարենց. հուշեր եւ խորհրդածություններ» գրքի վերջում կա մի վավերական բաժին՝ «Մայրս» խորագրով։ Սա Վ. Նավասարդյանի շուշեցի մոր մասին մի հուզիչ պատմություն է՝ կապված Ե. Զարենցի հետ։ 1925 թ. «խորհրդային Հայաստան»



օրաթերթում կարդալով Զարենցի «Հանգուցյալ Պարոնը կամ Պարոն Հանգուցյալը» արտասահմանյան պատմվածքը՝ Զարենցը դեռ չվերադարձած՝ Նավասարդյանի մայրը, խիստ վրդովված, գնում է թերթի խմբագրություն՝ Զարենցից պատասխան պահանջելու, թե ինչու է նա իր որդուն հանգուցյալ անվանել։ Բայց երբ արտասահմանից վերադարձած Զարենցն է գնում նրան այցելության եւ խոստման համաձայն նրան է հանձնում որդու՝ Վ. Նավասարդյանի նամակն ու գրուցում նրա հետ, փոխվում է մոր վերաբերմունքը եւ Զարենցին՝ որպես իր հարազատ որդուն, նա հյուրասիրում է իր պատրաստած համեղ կոլոլակով։

Անշուշտ, անվերապահորեն չենք ընդունում Վ. Նավասարդյանի բոլոր տեսակետները. դրանցից մի քանիսին կարելի է չհամաձայնել, նույնիսկ առարկել, բայց նրա գիրքն իր փաստառաջություններով, գրական երեւոյթների մեկնության լրջությամբ, չարենցյան գեղարվեստական աշխարհի գաղտնիքների ինքնատիպ բացահայտումներով միշտ էլ արժանի է համակիր ուշադրության։

Սամվել ՄՈՐԿՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սկիզբը՝ էջ 3

Ինքնակենսագրական երկերի այս կարճ շարքի վերջնամասերում ընթերցողն սկսում է մտածել, որ Սարոյան անհատը խառնաշփոթ հոգեվիճակի մեջ է, եւ նրա կողմից հաճախ արտահայտվող սիրո եւ եղբայրության շինծու փիլիսոփայությունը դրդում է մեզ մտածելու: Նրա որդի Արամի, Բարի Գիֆորդի եւ Լոուրենս Լիի վերջին կենսագրականների առանձին դրվագներ լոկ վերահաստատում են այն, ինչը Վիլյամ Սարոյանը բացահայտել է իր աշխատանքի ընթացքում: Միայնության ու չարության զգացումները, որոնք ելք են գտնում ողբի եւ անխոհեմ պոթելումների միջոցով, ցավ են պատճառում Սարոյանին, եւ այդ ցավը անդրադարձել է նրա ստեղծագործությունների վրա: Արամ Սարոյանը պատկերը լիարժեք դարձնելու նպատակով նկարագրում է իր եթնիկ խմբի կլանային պաշտպանողականությունը: Նա մտաբերում է Լյա Պիեռի դիտարկումները Ֆրեզկոյի հայկական գաղութի վերաբերյալ. «Տարիներ առաջ նա մի առիթով վիճեց մայրի-

ՎԻՆՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԵՐԿՐԻ ԱՇԽԱՐԻՆԵՐԸ

ifornia (July 1982), էջ 87):

Այս հիշողություններում երեւան է գալիս մի անձնավորություն, ով ունակ է գերծ մնալ մարդկային շփումներից, մի անձնավորություն, ով իր ամուսնության վախճանից հետո իր սեռականությունն ուղղորդեց մի թեթեւաբարո աղջկա անվտանգ եւ գրեթե անանձնավորված տիրույթ (տե՛ս Saroyan A., Նույն տեղում, էջ 87): Այդ մարդը նաեւ խուսափում էր իր երեխաների հետ սերտորեն շփվելուց: Մի խոսքով՝ Արամ Սարոյանը նշմարում է նույն հեգնանքն իր հոր կյանքում, ինչն առկա էր նաեւ նրա գրական երկերում: Սարոյանի գրվածքներում ընթերցողը հանդիպում է ամերիկյան գրականության մեջ հոր ամենագրավիչ կերպարին (տե՛ս Saroyan A., Նույն տեղում, էջ 118):


Ջոն Բրուքսն իր գրախոսականներից մեկում Վիլյամ Սարոյանի մասին ասում է հետեւյալը. «Սարոյանի խորհրդածություն-

են, որ Վիլյամ Սարոյանին բնավ չի հաջողվել իրեն լիարժեք դրսեւորել վեպի ժանրում, եւ սրա պատճառն այն է, որ սփյուռքահայ գրողին այդպես էլ չհաջողվեց հմտանալ կերպարների կերտման արվեստի մեջ: Սարոյանն ինքն էլ էր ընդունում այս փաստը (տե՛ս Bedrosian M., The Magical Pine Ring / Culture and Imagination in Armenian-American Literature, Detroit, Wayne State University Press, 1991, էջ 237):

Այդուհանդերձ, Սարոյանի կերտած հայկական կերպարներից, հատկապես նրա գրած պատմվածքներից եւ իր ֆրեզկոյաբանական ընտանիքը պատկերող կարճ դրվագներից ընթերցողը հասկանում է, որ գրողն ունակ էր իր սիրելի ընտանիքի անդամներին եւ ընկերներին ներկայացնելու մեծ ոգեշնչությամբ ու ռեալիստորեն:

Իր գեղարվեստական երկերում Սարոյանն իր հարազատ ազգային խմբին համառոտեւ բնորոշում է որպես ոչնչացող տեսակ: Չայեթի թիվը գնալով փոքրանում է, իսկ սրա գլխավոր պատճառներից մեկն ուժացումն էր: Ազգային փոքրամասնությունները լոկ հենք են հանդիսանում գլխավոր հերոսների ներքին պայքարի համար: Նրանք կրում են օտարահունչ անուններ: Երբեմն նրանք կասկածանքով են վերաբերվում օտարների եւ յուրօրինակ խոսելաձեւով մարդկանց: Նրանք հնազանդ են ճակատագրին, սակայն նրանք պարտադրում են մարդկանց ընդունել իրենց ազգային ինքնությունը՝ լինի դա հայ, ասորի թե՛ որեւէ այլ ազգ:

Երբեմն Սարոյանը դառնում է անտարբեր իր իսկ կերտած կերպարների հանդեպ, ինչը կարող է փոքր-ինչ տարօրինակ թվալ: Սովորաբար գրողներն իրենց հերոսների ճակատագրին վերաբերվում են այնպիսի սրտացավությամբ, ինչպես կվերաբերվեին իրենց կամ էլ իրենց մերածավորների ճակատագրին: Սակայն այստեղ հարկ է հաշվի առնել Վիլյամ Սարոյանի բնավորությունը. նա գերիուզական, հախուռն ու հակասական մարդ էր: Երբեմն Սարոյանը հրաժարվում է խոսել չարիքի մասին, եւ այս իրողությունը նրան բնավ չի դարձնում կա-



ռուցողական գրող: Ավելի ճիշտ կլինի ասել, որ Վիլյամ Սարոյանի ցասումն ու ինքնահրաժարումն արգելափակել են նրա հետաքրքրությունը մարդկանց եւ սոցիալական ուժերի հանդեպ: Ամերիկահայ գրողը, իբրեւ ինքնապատիժ, հրաժարվում է մարդկային շփումներից, բայց երբեմն գրողն այս հարցում փխրուն հավասարակշռության է հասնում այնպիսի երկերում, ինչպես օրինակ՝ «Իմ սիրտը լեռներում է» պիեսում, որտեղ վստահությունը եւ հավատը լույս են սփռում տարագիր ընտանիքի թշվառ կյանքի վրա: Ուստանիքի ու եթնիկ պատկանելության սարոյանական նկարագրությունները արտացոլել են նրա կայուն նվիրվածությունը: Արվեստագետը հավատարիմ է մնում այն սկզբունքին, որը երաշխավորել էր հայ ժողովրդի հարատեւումը: Յիշենք Սարոյանի երկերից մեկում ասվածը. «Թեթեամտորեն վերաբերվիր ընտանիքին, եւ դա կլինի քո վերջը»: Ի վերջո ամերիկահայ արձակագիրն իր հետ է տանում դժգոհ մարդկանց մանկության պատկերները եւ իր ճակատագրի արտացոլանքները: Համանման բան է նկարագրված «Մանուկների մահը» ստեղծագործության մեջ: Այդ նկարագրության հեղինակը մի դպրոցական է: Դրա միջոցով սարոյանական ասելիքն առավել հստակ է դառնում: Մեջբերենք մի դրվագ նշված երկից. «Դպրոցում կար մի մռայլ դեմքով տղա, ում անունն էր Կարսոն Սամալեր: Նրա հայրը մի խեղճ ու

կրակ, ընչազուրկ հարավցի էր: Նա վագոնով հարավից եկել հասել էր արեւմուտք: Նա մշտապես միայնակ էր, եւ երբ ես ուզում էի մոտենալ նրան ու զրույցի բռնվել, նրա պահվածքն ինձ հետ էր պահում իմ մտադրությունից: Նրա միայնության մեջ ինչ-որ արտասովոր բան կար, իսկ նրա գոռոզ ազնվական կեցվածքը թույլ չէր տալիս ինձ խոսել նրա հետ: ... Մի օր նա հանկարծակի դադարեց դպրոց հաճախել: Նա վերածվեց մի անորսալի կերպարի, ում ես երբեմն տեսնում էի իմ երագնեում: Թվում էր, թե ես նրան ճանաչել եմ լոկ իմ երագների մեջ: Բայց ես երբեք չէի կարողանում մոռանալ նրա հյուծված եւ գոռոզ դեմքը, ինչպես նաեւ նրա մեռակացությունը» (տե՛ս W. Saroyan, «The Death of Children», in The Saroyan Special, էջ 73):

Եզրափակելով սույն հոդվածը՝ հարկ է ասել հետեւյալը. թե՛ն Վիլյամ Սարոյանի գրական գործունեությունը միանշանակորեն չի ընկալվել ու գնահատվել բոլոր գրականագետների կողմից եւ մերթ ընդ մերթ քննադատության թիրախ է դարձել, բայց վերջին հաշվով մեր տաղանդավոր հայրենակիցն իր երկարատեւ եւ արգասաբեր գործունեության արդյունքում կարողացել է կայուն տեղ գրավել XX դարի գրական հսկաների շարքում՝ այսպիսով փառաբանելով ոչ միայն իր, այլեւ ողջ հայ ազգի անունը:

Տիգրան ՄԱՆՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու



կի հետ, ապա վազեց հայերի մոտ, որոնք ջերմորեն ընդունեցին նրան: Նրանք համակրանքով էին լցված նրա հանդեպ եւ տվեցին պսակ ու գավազան: Նա հրաշալի մարդ էր, նա ազգային պոետ էր, նա իրենով մարմնավորում էր լույս ու խիղ, միտք, հաց ու ջուր: Իսկ այդ հրեա աղջիկն իրավունք չուներ չարամտորեն օգտվել նրանից: Հավանաբար այդ աղջիկը Նյութական շահ էր ակնկալում «Նրանից» (տե՛ս Saroyan A., «Daddy Dearest», Cal-

ները լի են այնպիսի ճշմարտություններով, որոնք պարզից էլ պարզ են, եւ դրանք այնքան են կրկնվում գրողի կողմից, որ արդեն ձանձրույթ են առաջացնում: Սարոյանը չափազանց շատ ինքնահակասություններ ունի: Բացի այդ, Սարոյանը շատ անիմաստ բաներ է օգտագործում» (տե՛ս The Saturday Review (March 24, 1951), էջ 13): Քննադատների կարծիքով՝ հարկ չկար չափազանցել իսկական մարդկային զգացմունքները: Նրանք պնդում

Սկիզբը՝ 2017-ի

թիվ 19-20, 22, 2018-ի թիվ 1

Ինչքան էլ պայքարեն սիրահարները, մեկ է՝ ամբոխի կարծիքն ունենում է իր ազդեցությունը սիրահարների հարաբերությունների վրա: Հաճախ «դամազը», որպես մի օձ, «խալատ խօսք է հասկցուցում» սիրահարներից մեկին, բաժանում նրանց, խանգարում երջանիկ լինել, սակայն սիրող սրտերն արցունքներից ու ժամանակավոր տառապանքից հետո նորից մտերմանում են, միմյանց բացատրում եղելությունը: Եթե տղամարդն ավելի թթափ է դառնում ու շտապ մի «բարակիկ թղթիկ» է գրում յարին՝ ասելով. «Առ կարդա ու տես, կյուզել, խալատ խօսք եւ հասկցուցեր», ապա կինը հոգեպես տանջվում է, արտասվում ու նույնիսկ անիծում.

*Կարնա՛ր չարկըմնուն աչուին,
որ պահեն քեզ յիսնէ օտար:
Երբեմն էլ, սակայն, համարձակ կինն ինքն է խրախուսում յարին չնեւ «խամզոդի» խոսքերին ու տիրանալ իր ծոցին.
...Շօ՛ դուն մո՛ւտ ու մի՛ վախել,
խամզոդին տունըն աւիրի.
Երկու աչքըն կուր դառնայ, գէշ լեզուով
ըզմեզ չանիծէ:
Էջ 212*

Սա, իհարկե, սիրող սրտերի պայքարի մի ձեւն է, բայց կան այլ միջոցներ եւս: Սիրահար կտրիճը հաճախ համառորեն չի

Նահապետ Քուշակ. սիրո մեծ երգիչը



ցանկանում իր «սրտի ուզածից» զրկվել: Երբ նա «սօփախում» հանդիպում է իր յարին, չգուցարկ կարող, համբուրում է. «Բռնեցի ու պինդ պագի երկու երեսն խիստ կարօտով» (էջ 229): Իսկ կնոջ պահ-

վածքում բացահայտվում է բնավորության կարեւոր գծերից մեկը՝ ամոթխածությունը. նա չի ցանկանում «առակ», «խաղթ» լինել, բաժնասանքի առիթներ տալ, քանզի գիտակցում է, որ «ալամի» կարծիքը նախ եւ առաջ ազդելու է իր անվան վրա.
...Գրդիկի ես վրդին ածի, թե՛
պագիկ մ՛առնում մուրատով.
Չափլան երեսօքս էած,
թե՛ «Առակ մ՛եղնար ցորեկով»:

Էջ 264

Կինն ընդդիմանում է սիրահարին, նույնիսկ ապտակում համբույրի համար, սակայն դա դեռ չի նշանակում, թե նա այդ «պագը» չի ցանկանում, պարզապես ինքը «ցորեկվան որսիկ» չէ, այլ գիշերվա, քանզի գիշերով «ամեն դիժարս դուրանայ»: Մութն իր թեւերով անտեսանելի է դարձնում սիրահարներին, գաղտնի պահում նրանց սերը «ամբոխի աչքից».

Թէ՛ չէ հանեմ գրեզ գրլխուդ, յարեուդ ու յայլ շատ իրաց:
Էջ 267

Սիրահարներն ի վերջո հասկանում են, որ վերջնական ազատության հասնելու միակ ճանապարհն իրականությունից փախչելն է ու այդ կյանքի հետ կապող բո-

լոր միջոցները վերացնելը: Քնարական հերոսը կոչ է անում իր յարին հեռանալ ամենքից, ապրել բնության մեջ՝ գետի այն ափին, որի կամուրջը ջուրը տարել է, եւ ձյունով են ծածկված բոլոր ոտնահետքերը.

...Երթանք յայլ աշխարհ կենանք,
որ անվախ կենանք ալանի...
Էջ 148

Ի տարբերություն Թլկուրանցու, Աղթամարցու, որոնք կանացի գեղեցկությունը եւ սիրող սրտերի ապրումները ներկայացնում էին առանց կոնկրետացնելու սոցիալական միջավայրի ու շրջապատի պատկերները, Քուշակը հայրեններում տեսանելի է արտահայտում իր բացասական վերաբերմունքը սոցիալական անհավասարության հանդեպ (Մկրտիչ Մկրյան, *Գրականության պատմության հարցեր, եր., 1982, էջ 44*): Մեծ բանաստեղծի համար Նյութականի հետ կապված սերն այնքան մերժելի է, որքան եւ սիրահարներին արգելք հանդիսացող հետամնաց ամբոխի կարծիքը: Մերը պետք է ազատ, անշահախնդիր լինի եւ ոչ թե դրամով գնված ու հաշվենկատ, հակառակ դեպքում կկորցնի իր արժեքը:

Շարունակությունը՝ էջ 7

Հայտնի հրապարակախոս, հասարակական գործիչ Գրիգոր Արծրունու գործունեությունը չի սկսվում 1872-ից, երբ նա սկսեց հրատարակել «Մշակ» լրագիրը: Նշանավոր հրապարակագրի գործունեության բուն սկիզբը կապված է դեռևս ուսանողական տարիների հետ, երբ առաջին իսկ հոդվածներից (1865 թ.) երեւան է գալիս Նոր շունչ բերող գրական ու հասարակական գործիչը: Դա կապված էր նաեւ



պատմական այն ժամանակաշրջանի հետ, ուր ապրում էր ստեղծագործում էր Արծրունին: Իսկապես, 19-րդ դարի 50-60-ականներին հայ ժողովրդի կյանքը զարգացման որակական նոր փուլ էր թեւակոխել՝ առաջ բերելով նոր խնդիրներ: Պատահական չէ, որ Արծրունու գործունեությանն անդրադարձած շատ ուսումնասիրողներ նրա առաջադրած նոր մոտեցումները կապում են հենց այդ շրջանում ակտիվացած ժողովրդի կյանքի հետ: «Յայ ժողովրդի պատմությունը յիսունական թականներից սկսած մի նոր շրջանի մէջ է մտնում: Մեր գրողները այդ շրջանը անուանում են վերածնության շրջան: Եւրոպայում եւ նոյն իսկ Ռուսաստանում յիսունական եւ վաթսունական թականներին տեղի ունեցած քաղաքական եւ հասարակական շարժումներն ազդեցին հայ ժողովրդի անշարժութեան մատնված կեանքի վրա: Այդ անշարժ, կղզիացած կեանքը սկսեց շարժվել, եւ ահա միմեանց յետեւից սկսեցին երեւան գալ՝ մէկը միւսից աւելի կարեւոր, մէկը միւսից աւելի կենսական խնդիրներ: Այդ խնդիրների ծնողը, իհարկե, ինքը ժողովրդի կեանքն էր» (Խ. Մալումեան, Մտքի մշակը, Գրիգոր Արծրունու գրական գործունեութեան 25-ամեակի առիթով, Թիֆլիզ, 1890, էջ 5):

Միանգամայն ընդունելի է հաջատուր Մալումյանի բանաձեւային բնութագրումը, թէ առաջ եկած նոր խնդիրների ծնողը ժողովրդի կյանքն էր: Ծարունակելով իր միտքը՝ Խ. Մալումյանը հիշատակված դարաշրջանում (19-րդ դարի 50-60-ականներ) առանձնացնում է մի խումբ գործիչների (գրողներ, հասարակական ու քաղաքական դեմքեր)՝ անվանելով նրանց ժամանակի առաջադիմության իսկական, ովքեր մեր իրականության մեջ մտավոր հեղափոխության կարապետներ են հանդիսացել: «Խրիմեան Յայրիկ, Միքայէլ Նալբանդեան, Ներսէս Վարժապետեան, Ստեփանոս Նազարեան, Բաֆֆի, Ռաֆայէլ Պատկանեան, Գրիգոր Արծրունի, - ահա այն հսկաները, որոնց գործունեությունը մի ամբողջ դարագլուխ է կազմում մեր ժողովր-

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՆԱԽԱՄԱՇԱԿՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՉԵՐ

դեան պատմութեան մէջ, եւ որոնք տիրապետեցին այդ նոյն ժողովրդի սիրտն ու միտքը» (Նոյն տեղում, էջ 5-6):

Դժվար է չհամաձայնել Խ. Մալումյանի հատկապես վերջին մտքի հետ, թէ այս գործիչները նվաճել էին ժողովրդի սիրտն ու միտքը: Գրիգոր Արծրունին դարձել էր ոչ միայն ժողովրդի համար ընդունելի գործիչ (համեմատելով, գործունեության բուն շրջանում), այլեւ ինքն իրենով մարմնավորում էր առաջադեմ գաղափարները՝ գտնելով հատկապես երիտասարդությանը իր հետեւից տանելու բանալին: Արդեն իսկ առաջին հոդվածում Արծրունին, խոսելով բնական գիտությունների կարեւորության մասին, ժողովրդի զարգացման ամենամեծ թշնամին համարում է սնտիապաշտությունը եւ նախապաշարմունքները, քանի որ, ըստ նրա. «...բնական գիտությունները ազատում են մեզ սնտիապաշտությունից եւ նախապաշարմունքներից, որոնց մեջ եթէ կմա ազգը, նա չէ կարող անել ոչ մի բայլ դէպի առաջադիմություն» (Մեղու Հայաստանի, 1865, հ. 14): Առհասարակ առաջադիմության վերաբերյալ Արծրունին յուրօրինակ մոտեցում ուներ, որի վրա էլ, ինչպես հավաստում է նրա ժամանակակից ու կենսագիր Խ. Մալումյանը, խարսխվում է Արծրունու հետագա գործունեությունը:

հոդվածներ եւ մատնանշել այնպիսի խնդիրներ, որոնք միանգամից իրենց վրա էին բեռնում հասարակական լայն զանգվածների ուշադրությունը: Ըստ էության՝ նրա գործունեությունն սկսվում է հենց առաջին հոդվածներով, որոնցում ազատամիտ Արծրունին փորձում է շատ դժպետում ուղղակի կապանքները (կարծրատիպեր) փշրելով՝ առաջ գնալ: 1867-ին «Հայկական աշխարհ» ամսագրի 9-րդ համարում լույս տեսած «Գերդաստանի ազդեցություն եւ համալսարան» հոդվածում Արծրունին երիտասարդներին ուղղակի կոչ է անում սեփական կյանքը լավացնելու նպատակով հրաժարվել գերդաստաններում մինչ այդ ստացած «թյուր եւ ցուրտ» բարքերից, քանի որ դրանք առաջադիմության ամենագորեղ թշնամիներն են. «Ի՞նչ է առաջ գնալը, ի՞նչ է առաջադիմությունը: Առաջադիմությունը կյանքի լավանալն է: Իսկ երբ որ մարդս նախապաշարմունքն ունի, նա չէ կարող յուր կյանքը լավացնել, որովհետեւ նախապաշարմունքն այնպիսի զգացմունք են, որ չեն թույլ տալիս մարդուն հին բաների ու սովորությունների պակասությունները տեսնել: Եվ եթէ մարդը տեսնի եւս նոր բաների արժանավորությունը, նա դարձյալ չի թողնի հին բանը եւ չի ընդունի նորը, միայն այն պատճառով, որ նրա նախնիները չէին ընդունել այդ նոր

մատությամբ. «Ասեք թէ մի գետի ջուրը վատ համ ունի. այն մարդը, որ յուր երեխայությունից սովորել է այդ գետի ջուրը խմել, չի նկատում ջրի վատ համը: Բայց թող նա գնա մի քանի ժամանակ ուրիշ քաղաք, խմի ուրիշ ջուր,- եւ վերադառնալով նա անպատճառ յուր հայրենիքի ջրի վատ համը կնկատի» (էջ 53): Երիտասարդ Արծրունին հենց սկզբից իր համար ընտրեց մի այնպիսի ուղի, որով միշտ պայքարի մեջ եղավ, լինելով առաջամարտիկը՝ շատ հաճախ իր վրա ընդունեց ամենածանր հարվածներն ու քննադատությունը: Նախա-մշակյան շրջանը (1865-1871 թթ.) դարձավ մի տեսակ նախասկզբ բուն գործունեության համար, նախապատրաստական ընթացք գաղափարական պատերազմից առաջ, չնայած պիտի ընդունեք նաեւ, որ դեռեւս 1867-ից «Հայկական աշխարհ» ամսագրում տպագրվող հոդվածներով էր արդեն Արծրունին պայքարում պահպանողականության ու հետամնացության դեմ՝ ուղղորդելով խավարի մեջ խարխափող երիտասարդությունը: Իրավացի է Լիդա Գեւորգյանը, երբ, խոսելով Արծրունու հատկապես առաջին հոդվածների մասին, գրում է. «Ուսումնառության յոթ տարիների ընթացքում նա աշխատակցեց Թիֆլիսում լույս տեսնող «Մեղու Հայաստանի» թերթին եւ «Հայկական աշխարհ» ամսագ-



դեռեւս 1865-ին «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի 13 եւ 14 համարներում լույս է տեսնում քսանամյա ուսանող (Պետերբուրգում) Արծրունու անդրանիկ հոդվածը («Բնական գիտությունների նշանակությունը դաստիարակության մեջ»), որն ավարտվում է Հերշելից մեքեքված խոսքերով, թէ առաջադիմության համար մարդուն հարկավոր է ոչ միայն շատ բան սովորել, այլեւ շատ բան մոռանալ: Ըստ Մալումյանի՝ հենց այս սկզբունքով էլ Արծրունին հետագայում ծավալում է իր գործունեությունը: Սակայն չպետք է մոռանալ, որ այս նույն հոդվածում սկսնակ Արծրունին իր հոդվածի բնաբան է ընտրել Գյոթեի «Ֆաուստ»-ից.

Դու չես կարող մի մեծ բան շինել
Ու ահա սկսում ես փոքր բանից:

Նման գիտակցությամբ սկսելով իր հրապարակախոսական ուղին՝ Արծրունին շատ արագ սկսեց գրել նաեւ այնպիսի

բանը» (Գրիգոր Արծրունու աշխատությունները, հ.1, Թիֆլիս, 1904, էջ 53, այս հրատարակությունից հաջորդ հոդումների դեպքում կնշվեն միայն էջերը):

Առաջադեմ Արծրունին շատ լավ հասկանում էր, որ նախապաշարմունքի նման հզոր ուժ ունի նաեւ սովորույթը, որը նույնիսկ մեծ ցանկություն ունեցողի համար հաճախ կարող է խոչընդոտ հանդիսանալ: Ըստ Արծրունու՝ լուսավորության հասնելու համար հարկավոր է, որ մարդը ծանոթ լինի կամ գոնե ժամանակ առ ժամանակ ծանոթանա այլ գաղափարների ու մոտեցումների, հակառակ դեպքում նա չի իմանա առաջադեմ գաղափարների մասին, չի իմանա, որ իր կենսակերպից դուրս ավելի նպաստավորը կա, եւ սովորույթի ուժով կհարմարվի եղած վիճակին: Հիշատակված հոդվածում («Գերդաստանի ազդեցություն եւ համալսարան») այս մասին նա խոսում է պարզ ու պատկերավոր համե-

րին՝ պարբերականների համար բանալով պատուհան դեպի եվրոպական լույսը, իսկ իր համար՝ դուռ դեպի հրապարակախոսության անդաստանը: Երբ Թիֆլիս եկավ, հայ մտավորականության շրջանում նա արդեն շնորհալի հրապարակախոսի համբավ ուներ, որի Եվրոպայից հղած հոդվածները հետաքրքրությամբ ու հիացմունքով, անգամ զարմանքով էին կարդում հայկական երկու պարբերականների ընթերցողները» (Լիդա Գեւորգյան, Գրիգոր Արծրունին եւ նրա «Մշակը», Ե., 1996, էջ 26):

Արդեն վաթսունականների վերջերին Արծրունուն շատ լավ ճանաչում էին հայ ընթերցողները, հոդվածներում արտահայտված նրա մտքերը լուրջ ազդեցություն էին թողնում հատկապես երիտասարդության վրա՝ կարծես նախապատրաստելով «Մշակ»-ի ծնունդն ու միտքը:

Ծարունակությունը՝ էջ 7

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆՔԻ ՄԵՑ ԱՌԿԱԽ ՄԻ ԿՅԱՆՔ

Սկզբը՝ էջ 4
Մտածում է մեկնել Ամերիկա, սակայն 1904-ին իր մի ազգականի հրավերով մեկնում է Ալեքսանդրիա, Նորից սկսում զբաղվել առետրական գործերով, դառնում Վերակազմյալ հնչակյան կուսակցության՝ Եգիպտոսի նահանգային վարչության անդամ, խմբագրում «Ազատ բեմ» շաբաթաթերթը:

Ինչպես երեւում է Սիամանթոյին ուղղված 1904 թվակիր իր նամակից, Թեքեյանը ծրագրում է «Բաներ մը ընել», որը եւ Նուբար Փաշայի ու Տիգրան Կամսարականի նյութական աջակցությամբ կարողանում է 1905-ին իրականություն դարձնել՝ Ալեքսանդրիայում Մ. Կյուրճյանի հետ լույս տեսցնելով «Շիրակ» ամսաթերթը, որի նպատակն էր «աշխատիլ հայ դպրութեանց վերականգնումին» համար, իր էջե-

րը լայն բացել «բոլոր ճշմարիտ ու վավերական գրագետներուն առջեւ»՝ հանուն «ազգային վերածնումի գործին» («Շիրակ», Ալեքսանդրիա, 1905, թիվ 1):

Թեքեւ կարելի է ասել, որ մի քանի տարի՝ մինչեւ 1908-ի օսմանյան սահմանադրության հռչակումը, Թեքեյանն ազգային, կուսակցական ու գրական գործունեության հարաբերական «հանգիստ» կյանքի մեջ գտնվեց եւ զբաղվեց ավելի կրթական ու հոգաբարձուական աշխատանքներով՝ միեւնոյն ժամանակ պաշտոնավարելով Մելքոնյան եղբայրների ծխախոտի գործարանում: Ձեռնարկած «Արտավազդ Բ»

ողբերգությունը, «Ոսկի բանալի ժողովրդին գործածութեանը համար» թատերգությունները (վերջինը՝ տպված «Ազատ բեմում», 1904, թիվ 28) մնացին լոկ որպես գրական որոնումներ: Այս տարիներին Թեքեյանը մամուլի զանազան հրապարակումներում իհարկե տպագրեց նաեւ մի շարք բանաստեղծություններ, որոնց թվում եւ այն գործերը, որոնք 1943-ին մտան «Հայերգություն» ժողովածուի «Հայրենի գրոյցներով» շարքի մեջ, որոնցից հատկապես առանձնանում են «Հարալեզները» եւ «Գողթան երգիչներ» գործերը: Վերակազմյալ հնչակյան կուսակ-

ցության որոշ անդամների հետ ընդհարվելուց հետո Թեքեյանը 1906-ին դադարում է խմբագրել կուսակցության օրգան «Ազատ բեմը»: Անցնելով Կահիրե՝ սկսում է սատար կանգնել Եր. Օտյանի «Ազատ խոսքին», թղթակցում «Լուսաբերին», որպես «չվճարվող խմբագիր»՝ աշխատակցում 1906-1907 թթ. արդեն Կահիրեում լույս տեսնող «Շիրակին», որը տպագրվում էր, Թեքեյանի խոսքով ասած, Արփ. Արփիարյանի «հայրությունով» եւ «նիհարած» էջերով:

Ծարունակելի
Արծրուն ՍԿԱՅՍՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սկիզբը՝ էջ 5

Այն համակում է մարդու եռությունը, ուրախության եւ թախծի հարուստ հոգեվիճակներ պարգեւում: Այդպիսի սերը պիտի «խնծորով ու տրիւն-տրիւն շէքէրով» լինի, իսկ եթէ դրամն ավելի կարելոր է, ուրեմն այդ սերը «էրել պիտի կրակով»: Կինը եւս զայրույթով ու ատելությամբ է լցվում դրամով սիրո հանդէպ: Նա պաշտպանում է իր արժանապատվությունը, մերժում համբույրի համար առաջարկած դրամն ու համաձայնում անշահախնդիր, «մուրատով» զգացմունքին:

...Պագն, որ դըրամով լինի, չեմ իտար,
թէ աշխարհ աների.
Թէ ինձ մուրատով կուզես, եկր պագ՝
հաւատդ անցանի:
Էջ 53

Թվում է՝ նյութական անհավասարությունը պիտի բաժանի սիրող զույգին հատկապես այն դեպքում, երբ այն կարելորում են ծնողները: Հաճախ են նրանք արգելում իրենց դստերը ամուսնանալ «տառապելի» հետ: Այդ մասին գիտի աղքատ երիտասարդը, որը եւ չի համարձակվում իր սիրո մասին հայտնել «աղուորին», մինչդեռ վերջինս ընդդիմանում է ծնողներին, պաշտպանում իր սերը, քանզի հարստությունը մնայուն չէ՝ ի տարբերություն սիրո:

...Ծօ՛, ասա՛ եւ մի՛ վախեր, շատ
հարուստ է տառապելացել.
Անչափ հարըստի դըստրիկ տառապելի
ծոցիկ է պառկել:
Էջ 208

Սիրած յարին «բաժին հասնելու» համար գեղեցկուհին երբեմն դիմում է խորամանկության: Իմաստով, որ հայրը դեմ է իր ընտրությանը, նա խորհուրդ է տալիս սիրելիին ծոցը ոսկով լցնել ու իր հորը պարտական դարձնել:

...Ծոցդդ լի ոսկւով արա՛, եկր մեր
դուռն խաղ արա՛,
Չիմ հայրս պարտական արա՛...
Էջ 310

Այդ դեպքում միայն հայրը, չկարողանալով պարտքը վերադարձնել, աղչկան կտա կտրիճին, եւ վերջիններս, նշելով իրենց հաղթանակը, «կու խմեն ի սիրոյ վըրայ»: Անբացատրելի է կնոջ եռությունը. Նա սիրում է ու սիրվում, պայքարում ու նախաձեռնում, վայելում սիրո քաղցր պտուղներն ու երագուն կտրիճի մասին: Նա մերթ քմահաճ է ու սեթեւեթ, մերթ հասկացող է ու ըմբռնող, երբեմն գոռոզ ու համարձակ, երբեմն էլ՝ մատչելի ու ամոթխած: Այսպիսին են գեղեցկուհիները, այսպիսին է եւ քուչակյան «աղուորը»:



Նահապետ Զուչակի պոեզիայի մեջ կյանքի եւ սիրո հոգեբանական հայտնա-

Նահապետ Զուչակ. սիրո մեծ երգիչը



գործումներն իրենց երբեք չեն սպառի, որքան էլ տարբեր խորագրերով ներկայացվի քնարական հերոսուհին: Բանաստեղծը հավերժ ապրումների մեջ զգում է կնոջ խորհրդավոր շունչը. նրա ներկայությունն ամենուր է: Զուչակի սիրո ապրումներն ու խորհրդածությունները ծավալվում են նաեւ գիշերային լուսության եւ խորհրդավորության մեջ: Ճիշտ է նկատել Հրանտ Թամրազյանը. «Զուչակը հայտնագործել է մարդուն՝ լի ներքին առեղծվածներով, անվերջ անակնկալներով, գտել է կյանքի բազմերանգ ընթացքը կառավարող հոսանքը՝ սերը, որ գործում է գիշեր-ցերեկ՝ ե՛ւ արեւային պայծառ ցերեկներին, ե՛ւ կախարդող լուսնային գիշերներին»: Հայրեններում գիշերային պատկերները եւս կապված են կյանքի եւ կնոջ նկատմամբ տածած մեծ սիրո ու կարոտի հետ: Քնարական հերոսն իր յարին տեսնելու համար ճանապարհորդում է օրվա բոլոր պահերին՝ լինի առավոտ թե «բարկ արեւ», «թուխ ամպ գիշեր» թե «մութ գիշեր առանց լուսնի»: «Անձրեւ գիշերն» անգամ չի խանգարում սիրուհու մոտ գնալ:

«Գիշերս ես ի դուրս ելա մանր ու մեծ
թափավն ի վերայ»:
Էջ 244

Զուչակը սիրում է զարնանային զբոսանքն անուշաբույր ծաղիկներով ու ծաղկած ծառերով հարուստ պարտեզներում ու սարերում: Նրա համար, սակայն, ավելի հաճելի են «լուսնկա» խաղաղ ու պարզ գիշերներն այս բնության գրկում՝ յարի կողքին, երբ ինքն անհոգ ննջում է թռչունների դյութիչ երգի տակ:

Այս գիշեր լերանց բարձանց
ծաղկանանց ի մէջն եմ ի քուն,
Իմ եարս ի վերեւ զըխուս կու խըմէ,
Ես անհոգ ի քուն...
Էջ 134

Գիշերներգերում էլ է բացվում մի ինքնատիպ աշխարհ, սիրո մի ամբողջ պատմություն՝ իր զվարթ ու մռայլ պահերով, հոգեկան տվայտանքներով, հույսերով ու երազներով: Ծառ խոր են զգացվում կին արարածի նկատմամբ բանաստեղծի սերը եւ այդ սիրո հափշտակող ու համակող ուժը: Սիրահար սիրտն արթուն է Նույնիսկ քնած ժամանակ: Բնության ամեն մի շարժումի ու շշուկի մեջ «սրտի ականջը» լսում է յարի ձայնը, հիանում նրանով ու արծագանքում: Հաճախ սիրահարն իր գեղեցկուհու ձայնը լսում է բլբուլի երգի մեջ ու զարմանում, որ «սիրո հավը» հասկանում է սրտի գանգատները, խոսում սիրելիի լեզվով:

Գիշերս ես ի քուն էի, իմ սրտիս ականջն
էր ի բաց.
Սիրու հաւն ի ձայն էած, յօք լըսեց
սրտիկս ու դողաց.
Կա թուէր իմ եարին լեզուն ան հաւուն
բերանն էր դըրած.
Ո՛վ իմ սրտիս գանգըտին ան հաւուն էր
հասկըցուցած:
Էջ 224

Սիրող սրտերը միշտ էլ սթափ են ու արթուն: Նրանց միջեւ կարծես «պարտադիր մի պայման» գոյություն ունի՝ մշտապես արթուն լինել եւ սիրո ձայնին հետեւել: Այս է պատճառը, որ սիրահարի համար գիշերվա իր գինով լինելը արդարացման միջոց է, քանզի «քիչ մի քուն կար ի յիմ գլխիս», մինչդեռ «խոշ եարը» զանգատվում է նրանից, քե «սիրո տեր» հոգին գիշերը չպիտի քնի:

...Երեսն երեսիս քըսեց ու գանգատ
անէր իմ սրտիս՝
Ծօ, դուն չես մի ամըշնար, սիրոյ տեր՝
ի քուն կու լինիս:
Էջ 194

Մեծ սիրերգակն իր գրեթե բոլոր հայրեններում անվերջ ձգտում է որոշել կնոջ գեղեցկության տեղը ե՛ւ երկրի վրա, ե՛ւ երկնքում: Գիշերներգերում նա յարի գեղեցկությունը համեմատում է երկնային մարմինների ու երեւոյթների, նրանց գործողության ու ազդեցության հետ («Լուսին ջրբեր ո՞վ տեսեր արեգակն ու կուժն ի յուսին») (էջ 171)՝ գերազանցությունը տալով յարին, որը եւ արեգակի եւ պայծառ լուսնի լույսը «կու պատլե»:

... Նըման այն աստղերն ես դուն,
որ ամեն առավօտն էլնե.
Քիչ-քիչ նա վեր կու գա, զբարի լույսն ի
հետ կու բերե:
Էջ 171

Սակայն իր «աղուորը» միայն աստղ չէ, որը բարի լույս է բերում իր հետ, նա նաեւ «հողեղեն» լուսին է, որ լուսավորում է սիրահարի կյանքը:

Լուսին, պարծենաս, ասես, լուս կուտամ
աստընւորիս
Ահա հողեղեն լուսին ի գրկիս՝
Էրեսիս...
Էջ 221

Եվ եթէ «հողեղեն լուսինը» սիրուց լույս է ճառագում, ապա երկնային լուսինը, եթէ սիրահարվի, աշխարհին պակաս լույս կտա:

... Վախեմ սիրոյ տեր լինիս, լուս
պակաս տաս աստընւորիս:
Էջ 221

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 6

Բազմաթիվ են այն վկայությունները, որ իսկապես Արծրունու հողվածները կարդացվում էին հենց իրենց մեջ պարունակվող Նոր մտքերի շնորհիվ: Ա. Երիցյանը «Գրիգոր Արծրունու եւ նրա քսանը հինգ տարիայ գրական գործունեության առիթով» գրքում վկայակոչում է նաեւ «Հայկական աշխարհ»

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՆԱԽԱՄՏԱԿՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՉԵՐ

ամսագրի խմբագիր Ս. Ստեփանեի խոսքերը, թե Արծրունու գրվածքներն օրըստօրե հռչակ էին ստանում, եւ նրա հողվածների առիթով իրենք ստանում են նաեւ նամակներ ընկերոջներից: Երեւանցի պ. Գեորգ Շահնազարյանը Ս. Ստեփանեին գրում է. «...վերջերումս շատ քիչ է պատահել ինձ, որ մեր օրագրերը այնպես գրաւեն իմ սիրտը եւ պահանջեն իրանց լիովին կարդալ, ինչպես ձեր օրագրի հ. 6-9, մանաւանդ ազնւամիտ պ. Գրիգոր Արծրունու փափկաշունչ եւ նիւթաւոր յօդածները: Դորա հեռաստանից հաղորդած ամեն մէկ համբաւը, ամեն մէկ տող գրուածը ունեցան ինձ վերա մէկ առանձին կենսատու եւ սփոփիչ ազդեցութիւն» (Ա. Երիցյանց, Գ. Արծրունու եւ նրա քսանը հինգ տարիայ գրական գործունեության առիթով, Թիֆլիզ, 1890, էջ 89):

Արծրունին մինչեւ «Մշակ»-ի հրատարակությունը կարողացավ ստեղծել իր ուրույն ոճը, որին բնորոշ էին համարձակ միտքը եւ գոյություն ունեցող սկզբունքներին անպայման հակադրվելու ձգտումը:

Արծրունու զաղափարակից ու կենսագիր Լեոն եւս շեշտում է նախամշակյան Արծրունու ինքնատիպ ու առանձնացող ոճը: Ի դեպ, անդրադառնալով այդ շրջանում տարբեր թերթերին ու ամսագրերին Արծրունու աշխատակցելուն, ինչպես նաեւ արդեն մշակյան շրջանում իր իսկ աշխատակցած «Մեղու» լրագրի երդվյալ թշնամի դառնալուն՝ Լեոն որեւէ հակասություն չի տեսնում, ավելին, ըստ նրա. «Գլխավոր սկզբունքների, հիմնական դավանությունների տեսակետից չի կարելի գտնել այնպիսի գրվածքներ, որոնցից Արծրունին հրաժարվելու կարիք ունենար իր ամբողջ կյանքի ընթացքում: Այդ պատճառով ոչինչ չէր նշանակում այն, որ նա երկար ժամանակ գրում էր «Մեղուի» պես մի լրագրում, որ հետո դարձավ նրա ամենաթուկ թշնամին: «Մեղուի» մեջ էլ Արծրունին Արծրունի էր, Նույն գրական գործիչը, որ առանց սայթաքելու, առանց շեղվելու գնում էր իր ուղիղ ճանապարհով» (Լեո, Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1987, էջ 281):

Նախամշակյան շրջանի հողվածներում աստիճանաբար ուրվագծվում են նաեւ այն խնդիրներն ու ուղղությունները, որոնք պիտի որդեգրեր «Մշակ»-ը: Մասնավորապես իր հետագա գործունեության ընթացքում Արծրունին մշտապես ուշադրության կենտրոնում պահեց կնոջ ազատագրության խնդիրը՝ համոզված լինելով, որ նրանց լուսավորված լինելուց է կախված զաղափարապես ազատ սերունդ ունենալու հարցը: Այս խնդրի առնչությամբ նա հանդես եկավ բազմաթիվ առաջնորդող հողվածներով եւ «Երագ» պատկեր-պատմվածքով: Խնդիրը, սակայն, Արծրունուն մտահոգում էր մինչեւ «Մշակ»-ը, եւ 1868-ին «Հայկական աշխարհ» ամսագրում տպագրվում է նրա «Ի՛նչ է կնամարդ» հողվածը, որի մեջ քսաներեքամյա երիտասարդը փորձում է վերաձեւակերպել կնոջ տեղն ու դերը իր իսկ պատկերացրած հասարակության մեջ:

Շարունակությունը՝ էջ 8

Նահապետ Քուշակ. սիրո մեծ երգիչը



Սկիզբը՝ էջ 7
Գիշերային խավարի ու մարդու մութ կյանքի մեջ լուսե շող է նետում սիրահարված գեղեցկուհին։ Սիրո լույսն իջնում է գիշերվա մթության մեջ, սփռվում ամենուր, լուսավորում մարդու աշխարհը։ Սիրո շնորհիվ կինն ու լույսը Քուշակի համար դառնում են հոմանիշներ։ Նա չի ծանոթանում սքանչանալուց այդ հրաշալի լույսով, որով լուսավորվում են նույնիսկ աստղերը։

*Իմ եար, դու յերդիկն ի քուն, ծոցդ լոյս կուտա աստղերուն.
Կամ առ զիս ի ծոցդ ի քուն, կամ տեսաւոր տուր երթամ ի տուն...*
Էջ 184

Անմահն են քուչակյան հայրեններում հանդիպող «քնած գեղեցկուհիները», որոնց, երեւի, այսքան հաճախ չգտնենք ոչ մի գրողի ստեղծագործության մեջ։ Ըստ Քուշակի՝ նրանց ծոցի լույսը «շառաւիղ յերկինս տվեր, խաւարեր լոյսն աստղերուն»։ Այս լույսի մասին է երագում բանաստեղծը, հիանում գլոմկիկն արծակ արած գոգալներով, որոնց ամեն գիշեր երդիկից տեսնում է շրջագայող լուսինը։

*Իմ եար բարձրազնաց լուսին, ո՛ւր երթաս գիշերդ անիհուն.
Շատ երդիք ի վար հայիս, շատ կուգալ տեսնես դու ի քուն...*
Էջ 146

Սիրո աշխարհում, թերեւս, ավելի ազդեցիկ ու տպավորիչ են հոգեբանական հարաբերություններով հարուստ գիշերները, ուր ծաղկում են հույսերն ու երագները, հնչում սիրո հավերժական լուրը։ Քուշակի համար առանց գեղեցկության եւ սիրո թրթռի երգ չկա։ Գիշերեղբերում էլ ապրումներն ու հույզերը, զգացմունքի ամենաբազմազան ելեւեղները իրենց փոխադարձ դրսեւորումներն են ունենում կնոջ ներաշխարհում։

Հայրեններում տեսնում ենք միջնադարյան նահապետական բարբերն արիա-մարիող կնոջը, որը, որպես ինքնուրույն գործող անձ, իր սիրո պաշտպանն է։ Նա իր սիրեկանին պատահաբար հանդիպում է մարդաշատ ու նեղ «սօղմախում», ուր հնարավոր չէ սիրո արտահայտման եւ ոչ մի ձեւ։ Խորամանկ գեղեցկուհին ունքերով նշան է անում յարին, որ հեռանա ու գիշերը հանդիպեն, քանզի գիշերով «ամեն դիժարս դուրանայ», իսկ մինչեւ լուսանալը նա կարող է վայելել իր «պագերը»։

*Տեսայ իմ հոգուս հոգին՝ զարդարուած ու բաղնելայ.
Ես ալ ի դեմիկն ելայ՝ նեղ սօղմախ ու խիստ դալապայ,*

*Պեչան ալ ի վեր տարաւ, ուներովն արաւ թէ՛ գընա՛,
Գընա՛ ու գիշերն արի՛, պա՛գ հազար միւն որ լուսանայ.
Բեզի գիրկուծոց անեմ որ ամեն դիժարս դուրանայ:*
Էջ 244

Այսպիսի հայրենները եւս մեկ անգամ ապացուցում են, որ քուչակյան «աղուորը» «ցորեկվան որս» չէ։ Նրան «կորսան ի մութ գիշերով»։ Ցերեկը սիրահարն իր գիշերային այցելության մասին պիտի հայտնի սիրուհուն, որպեսզի վերջինս չքնի, անհամբեր սպասի եւ նրա առաջ դուռը բաց պահի։ Երբ քնարական հերոսը զանգատվում է սիրուհուն, թե գիշերով վերջինս հյուր է գնացել եւ դռնակը փակ տեսնելով՝ «փոշիման ու լալով ի յետ» է դարձել, գեղեցկուհին ինքն է նախատում նրան։

*... Երբ դուն ի մեր դուռն եկիր, ցորեկով ինձ է՛ր չիսսիր.
Բեզի թէ դուռ չի բացեր, նա անժամ ինձի խռոռկիր:*
Էջ 197

Գիշերային խավարը սիրո երգերում ոչ թե թաքցնում, այլ ավելի տեսանելի է դարձնում կնոջ համարձակ ու նախաձեռնող լինելը։ Նա

գիշերով հրավեր է ուղարկում իր յարին, կանչում իր սերը վայելելու՝ ազատ ու անկաշկանդ արատահայտելով իր զգացմունքը։

*...Ըո սերն իմ սրտիս մեջ կու այրի, զինչ հոււմ ճրագու.
Արտասուս երեսս ի վայր կու թափի զինչ գետ ու առու:*
Էջ 197

«Աղուորը», սակայն, միշտ չէ, որ լուսավորում է յարի հոգին իր սիրո եւ գեղեցկության լույսով։ Հաճախ է նա դրսեւորում իր երերուն եւթյունը. սիրում է խաղալ սիրահարի սրտի հետ ու պահել նրան անորոշության մեջ՝ էլ ավելի ցանկալի դարձնելով իր սերը։

*... Ո՛չ կ'առնում ի ծոցս ի քուն, ոչ տեսաւոր տամ երթաս ի տուն,
Հանցեղ երերուն պահեմ, միւն որ գայ լոյսն առաւուտուն:*
Էջ 144

Այսպիսի դեպքերում սիրահարն ապավինում է բնության օգնությանը, դիմում աստղերին, խնդրում՝ իջնեն եւ «դեղ ու ճար» անեն իր վերջին, քանի որ դարձել է «խեւ սիրու տեր» ու «անմատաք»։ Նա չի կարողանում խրատել իր հոգուն, որ «կու պահե զանձիկս ի խըսար», դարձել է կնոջ

սիրո գերին, որից եւ ազատում չկա։

*Աստե՛ղբ դուք հարիւր հազար, մէկ ի վայր եկեք հաւասար.
Յորտեղ կայ խելօք խիկար, իմ խոցուս արեք դեղ ու ճար...*
Էջ 167

Երբեմն էլ խաղաղ գիշերները վերածվում են «արյան ու արցունքի գիշերի», դառնացնում սիրող սրտի կյանքը, «արտասուքի գետեր հոսեցնում» նրա աչքերից, երբ վերջինիս հայտնում են, թե սիրած յարն իրեն մոռացել է։ Այս դեպքում անկարող է դառնում նույնիսկ բնությունը՝ կորցնելով իր գեղեցկությունն ու հմայքը։

Այնուհանդերձ, քուչակյան գիշերները մեծ մասամբ սիրահարիների համար լի են սիրո եւ երջանկության սպասումով, երբ նրանք «պագ տան ու պագ առնուն. դավ անեն մեկուլ գիշերուն» (Էջ 268)։ Գիշերը նրանց համար այնքան սպասված վայելքի ժամն է, որը կարճ է, ինչպես ամեն մի երջանիկ ակնթարթ։ Սիրահարն ուզում է, որ գիշերը երկարի եւ նույնիսկ տարի դառնա, քանզի «գիմ եարն ինձի հիւր եկեր,- գեմ հազար տարու», իսկ առավոտը հեռանա, քանզի լույսը կբաժանի իրեն յարից։

...Առաւօտ, դու զատ կեցիր, որ ըզմեր խաղըն կ'աւիրես.

Գաս ըզլոյսն ի վրայ բերես ու զիս իմ եարես բաժանես:
Էջ 200

Նահապետ Քուշակը գիշերեղբերում բացել է սիրո խորհրդավոր մի աշխարհ, ուր հաճախ կինը գրավիչ է իր զգացմունքների պարզությամբ ու ձգտումներով դեպի իր սիրեցյալը։ Նա մի առանձին փայլով է նկարագրում այն ամենը, ինչը կարող է զգալ սիրող սիրտը, գեղեցկության այն բոլոր հրապույրները, որ կարող է ունենալ կինը։ Եվ այդ ամենը իրական աշխարհում է։ Սերն է այն հզոր ուժը, որ շարժում է հոգին ու գուրթը, սերն է պատճառը, որ քնած կամ քնած ձեւացող գեղեցկուհին թույլ է տալիս սիրահարին «պագ առնել հազար համարով»։

*... Հզիրտեմ թէ քո՛ւն էիր թե տուիր դու սրտի կամով,
Կամ խիղճ ի մըտիդ բերիր թէ մանուկ մ եկեր գիշերով:*
Էջ 280

*Շարունակելի
Վարդան ԵՐԻՍՏՈՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ*

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՆԱԽԱՄԵԾԱԿՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՇԵՐ

Սկիզբը՝ էջ 7
Վկայակոչելով տարբեր ժողովուրդների մեջ կնոջ ունեցած ազդեցիկ դերի կարեւորությունը՝ Արծրունին գրում է, որ հենց կնոջ դրությունից կարելի է պատկերացում կազմել տվյալ ազգի լուսավորության մակարդակի մասին։ Հեղինակն այս հոդվածում առաջ է քաշում այն առողջ միտքը, որ եթե սերունդներ դաստիարակողները մայրերն են, ապա «ի՛նչ դաստիարակություն կարող են երեխաներին տալ, եթե նոքա սեփական անկախ միտք չունեն, եթե նոքա ստրուկներ են...» (Էջ 91)։


Այնուամենայնիվ, այս հոդվածներից մի քանիսը եւս առանձնանում են Արծրունուն բնորոշ՝ երբեմն ծայրահեղությունների հասնող ձեւակերպումներով։ Պատահական չէ, որ 1868-ին «Հայկական աշխարհ» ամսագրի 9-րդ եւ 10-րդ համարներում տպագրված Արծրունու «Գրականություն չկա» եւ «Իդեալիստներ» հոդվածներն ամսագրի խմբագիրը (Ս. Ստեփանե) տպագրում է որոշակի բացատրությամբ՝ ամբողջ պատասխանատվությունը թողնելով հեղինակի վրա։ Իր հետագա գործունեության ընթացքում եւս Արծրունին չիրաժարվեց առանձին ծայրահեղ ձեւակերպումներից ու մոտեցումներից, որոնք շատ հաճախ նրան լրացուցիչ հակառակորդներ էին ավելացնում։ «Գրականություն չկա» հոդվածի համար Ս. Ստեփանեն ընթերցողներին պարզաբանում է, որ չնայած խմբագրությունը համակարծիք չէ հեղինակի մտքերին, այնուամենայնիվ ցանկանում է «ընթերցողներին

մասնակից կացուցանելու այն խելացի եւ միանգամայն օգտավետ մտքերին»։ Խմբագրի այս բացատրությունը Լեոն համարում է անտրամաբանական, քանի որ մի կողմից առկա է խմբագրի ցանկությունը՝ հոդվածագրի խելացի մտքերը հասցնել ընթերցողներին, իսկ մյուս կողմից նկատելի է խմբագրի՝ պատասխանատվությունից խուսափելու իրողությունը։ Կարծում ենք՝ խմբագիրն այս դեպքում իրոք իրավացի է, քանզի հոդվածում առկա ոչ բոլոր մտքերն ու տեսակետներն են ընդունելի, իսկ Լեոյի բողոքը իրականում պայմանավորված է իր գաղափարակցին անվերապահորեն պաշտպանելու եւ անսխալ տեսնելու մեջ։ Միեւնույն ժամանակ Լեոն ընդունում է այն փաստը, որ հիշյալ հոդվածի վերնագիրը հիշեցնում է ռուս նշանավոր քննադատ Բելինսկու առաջին մեծ հոդվածը։ Իսկ իրականում Արծրունին այս հոդվածում, կանգնելով օգտապաշտ գրականության կողմնակցի դիրքերում, հայ գրականության գնահատման փորձ է կատարում։ «Հայկական գրականություն.... Ի՛նչ հայկական գրականություն.... Կա՛ր արդյոք հայկական գրականություն։ Եվ եթե կա, ի՛նչ օգուտ կարող ենք նորանից քաղել։ Նոր հայկական գրականություն չկա։ Գոնե ես չեմ կարծում, երկու կամ երեք գիրք, չորս կամ հինգ օրագիրներ,- կարելի լինե՞ր գրականություն անվանել» (Էջ 122)։

*Շարունակելի
Արշալույս ԳՆԱՍՏՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ*

Տրասարակվել է

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությանմբ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել Գրիգոր Մարաշեցու «Բան գովեստից» երկը։ Այն հրատարակության է պատրաստել Բ. Գ. Դ. Արշակ Մարդյանը։

ԺԲ դարի հոգեւոր գործիչ եւ մատենագիր, Հեսվանց վանքի հիմնադիր Գրիգոր Մարաշեցու «Բան գովեստից» քնարերգական աշխատությունը՝ նվիրված Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնին, առաջին անգամ է

հրապարակվում։

Երկի մեջ Գրիգոր Իմաստասեր Մարաշեցին, բացի Աստվածածնի վերափոխման պատմությունից, անդրադարձել է նաեւ նրա պատկերի ավանդությանը։

Գիրքը հրատարակվել է մեկեւնասությամբ «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի։

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 30.01.2018թ..

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ